

**ՀՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ**

**ԴԱՎԻԹ ՆԵՐՍԻԿԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

**ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՎՈՐՈՂ  
ԻՆՍԻՏՈՒՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԻՆԴԻՐՆԵՐԸ**

Ը.00.06 «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ  
տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

## **ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2013**

**Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական  
տնտեսագիտական համալսարանում**

**Գիտական խորհրդատու՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Աշոտ Խաչատուրի Մարկոսյան**

**Պաշտոնական ընդունմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Գրիգոր Եղիշի Կիրակոսյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Վահրամ Վաղինակի Բաղդասարյան**

**Հայ-Ռուսական(Սլավոնական)  
համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2013թ.-ի նոյեմբերի 1-ին, ժամը 13<sup>30</sup>-ին  
Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի թիվ 015 մասնագիտական  
խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք.Երևան, Խ.Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ.-ի սեպտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, տեխնիկական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

**Ա. Շ. Առաքելյան**

## Ատենախոսության ընդիհանուր ընութագիր

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում գործարարությունն ավելի արդյունավետ է քանի զնահատվող պետական բյուջեոկրատական մեխանիզմի համեմատությամբ: Ինչպիսի՞ն պետք է լինի պետության և տնտեսության, պետության և գործարարության փոխգործունեությունը:

Ընդհանուր պատասխանը հասկանալի է՝ օպտիմալ, իսկ օպտիմալը, ինչպես հայտնի է, փոփոխվում է կամ կախված է ծևափոխված տնտեսության զարգացման փուլից և այն հիմնախնդիրների լուծման գերակայություններից, որոնք առաջ են քաշվում բարենորոգման լուրաճանաչությունում:

Խոսքը ոչ թե տնտեսության մեջ պետության ընդհանուր խնամքի կամ հոգածության, այլ պետության և շուկայական մեխանիզմի գործառությաների արդյունավետ համադրության, նրանց միջև լավագույն հարաբերակցություն սահմանելու մասին է: Խնդիրն այն չէ, թե պետությունը տնտեսությանը միջամտի, թե ոչ, այլ պետական միջամտության ինչպիսի՝ գործիքներ ու ձևեր պետք է կիրառվեն և ինչպիսի՝ հնարավոր հետևանքներ դրանք կարող են ունենալ<sup>1</sup>:

Տնտեսության կառավարման գործում պետության մասնակցության չափի Վերաբերյալ հարցը գիտական ընդլայնված քննարկումների առարկա է: Ինչպիսի՞ գործառույթներ պետք է կատարի պետությունը: Նպաստու՞ն է արդյոյ պետության միջամտությունը տնտեսության արդյունավետության աճին: Որպես պետության Վերահսկողության առավել տարածված նպատակներ կարող են ճանաչվել բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումը (տնտեսական աճի խթանումը) և սոցիալական արդարության ձեռքբերումը:

Անցումային տնտեսություններում երկարաժամկետ տնտեսական աճի հասնելու խնդիրը հատկապես արդիական է: Սոցիալիզմի կառուցման 70 տարիների ընթացքում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) ու Նախկին ԽՍՀՄ երկրները բավական հետ մնացին զարգացած կապիտալիստական երկրներից՝ առանձնապես տեխնոլոգիաների զարգացման ոլորտում և բնակչության սպառնան մակարդակով:

Ղեր XVIII դարում Ա.Սմիթը «Ազգերի հարստության բնույթի և պատճառների նախնական հետազոտություն»-ում սահմանեց երկրի և նրա բնակչության ծավալման հիմնական պայմանները՝ պարզ օրենքներ, չծանրաբեռնող հարկեր և խաղաղություն<sup>2</sup>: XVIII-XIX դարերի շատ տնտեսագետներ առավելագույն տնտեսական ազատության կողմնակիցներ էին, երբ պետության դերը սահմանափակվում է «դասական» գործառությունների իրականացմանը. իրավունքների և ազատության պաշտպանություն, նաև ավուրժականության անձեռնմխելություն, հավասար քափանցիկ և հաստատուն կանոններով տնտեսական կյանքի ապահովում: XX դարի 30-60-ական թթ. արդիական դարձավ տնտեսության պետական կարգավորման զաղափարի անհրաժեշտությունը:

Պետության և մասնավոր հատվածի համագործակցության վերահիմնաստավորումն արդի տնտեսության ձևավորման, ինչպես նաև դրա համընդիհանրացման հետևանքն ու տրամաբանական շարունակությունն է:

Այսուամենայինկը, պետական պաշտոնյամերը չեն տիրապետում ամբողջական տեղեկատվություն շուկաների վերաբերյալ, ինչպես նաև մեծ է հավանականությունը, որ նրանք կծագեն ստանայ տնտեսական «ռենտա»՝ օգտագործելով հրենց պաշտոնական

<sup>1</sup>Ա.Մարկոսյան, Դ.Քաջաներյան, Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, մենագրություն, Եր., «Տիգրան Սեծ», 2003, էջ 165:

**А. Смит**, Исследование о природе и причинах богатства народов. М.: ЭКСМО, 2007, 960 с.

<sup>3</sup> Ա. Նազարյան, «Պետության և միջազգային գործարարության համագործակցության հարցի շուրջ, «Բանբեր Դայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2010, 3(21), էջ 27:

դիրքը: Բարեկեցության պետական գաղափարի ծախողումը ակտիվացրեց գոյություն ունեցող մողեների և հայեցակարգերի վերանայումը՝ ստիպելով արևանյան երկրներին գրավել նաև ավելացնելու մասը, սահմանափակել պետական ծրագրերը և սոցիալական ոլորտում բարեկիխումները<sup>4</sup>:

XX դարի 80-ական թվականների սկզբում տեղի ունեցավ հեղաշրջում նաև տնտեսական աճի տեսության մեջ: Արտադրության գործոնների (հիմնականում աշխատուժ և կապիտալ) նվազող հատույցի և արտադրության մասշտաբից նշտական հատույցի, արտածին տեխնոլոգիական զարգացման և կատարյալ մրցակցության գոյության մասին նեղասական նախադրյալները փոխվեցին նոր, առավել հրական ենթադրություններով: Նոր մողեները նախատեսում են անկատար մրցակցության գոյություն և դրական էքստերնալներ գիտելիքների արտադրությունից, որը թույլ է տալիս պահպանել արտադրական ֆունկցիայի մասշտաբից աճող հատույցի հնարավորությունը: Քանի որ տեխնոլոգիական զարգացումն այս մողեներում փոխարկվում է որպես ներքին (որոշված հենց նույն մողելով), այդ ուղղությունը ստացավ աճի էնդոքտն տեսություն անվանումը<sup>5</sup>:

Նոր տեսությունները թույլ տվեցին ցույց տալ տնտեսական քաղաքականության ակտիվ դերը կայուն տնտեսական աճի ձեռքբերման գործում: Աճի տեսության և մեկ ուղղության՝ քաղաքատնտեսական աճի շրջանակներում, քազմարիվ էնպիրիկ հետազոտությունների օրինակով ցույց էր տրվել տնտեսական աճի տեմպերի և տնտեսությունում պետության միջամտության մասշտաբների միջև հակադարձ կապը: Բացի դրանց, բացահայտվել էր ուղղակի կամվածությունը ինստիտուցիոնալ միջավայրի որակի և սեփականության իրավունքի պաշտպանության ու տնտեսական աճի միջև<sup>6</sup>:

Տնտեսական աճի հարցերով գրավող տնտեսագետների մոտ միշտ եղել է գայքակղություն գտնել տնտեսական աճի գաղտնիքի բացահայտման «բանալին»: Տնտեսական աճի պատճենագործության մեջ արդեն եղել են մի քանի «դեղատոնսեր», ֆինանսավորման պակասաւորդի հաղթահարում, ֆիզիկական և մարդկային կապիտալի կուտակում ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից կառուցվածքային վերափոխումների ֆինանսավորումը: Բոլոր այս հայեցակարգերը հակասում էին տեսական տնտեսագիտության սկզբունքներին: «մարդկի արձագանքում են խթաններին», որն ընկած է տնտեսական զարգացման բացատրության հիմքում<sup>7</sup>:

Ինստիտուտները որպես տնտեսական աճի գործոն սկսեցին դիտարկվել նոր ինստիտուցիոնալ տեսության կամ ինստիտուցիոնալ տնտեսագիտության զարգացման շնորհիվ, որի հիմքը դրել է Դ.Նորթը: Դ.Նորթի և Ո.Թոմասի աշխատության մեջ ներկայացված է այդ ժամանակ իշխող այն տեսակետի քննադատական վերլուծությունն, ըստ որի՝ ինստիտուտները համարվում են տնտեսական աճի կողմնակի արդյունք, իսկ հիմնական կախավայում ներդրումները՝ աճի հիմնական գործոն, և հեղինակներն առաջարկում են մեկ այլ վարկած, որի համաձայն՝ երկրների միջև աճի տեմպի տարբերությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ տարբերությամբ:

Դ.Նորթի և Ո.Թոմասի աշխատության հրապարակումից հետո նրանց մոտեցումները ստուգման ենթարկվեցին տնտեսական աճի մի խումբ հայտնի հետազոտողների կողմից: Դրանից հետո ինստիտուցիոնալ մոտեցումը ճանաչվեց տնտեսագի-

<sup>4</sup>Այդ մասին տե՛ս, մասնավորպես, **Ա. Մարկոսյան**, «Պետությունը և շուկան. Եր., «Տիգրան Մեծ» 2000, 560 էջ:

<sup>5</sup>P.Romer (1986) Increasing Returns and Long-Run Growth, Journal of Political Economy, 94, 5, p.1002-1037.

<sup>6</sup>A.Alesina (1997) The Political Economy of High and Low Growth, Annual World Bank Conference on Developing Economies 1997, 33 թ., Barro R. (1997) Determinants of Economic Growth: A Cross-Country Empirical Study. HIID Development Discussion Paper, 579, April.

<sup>7</sup>Առաջին Սոցիալ-տնտեսական բանկիտումների արդյունքների գնահատումը անցումային տնտեսությամբ երկրներում, «Բանքեր Հայաստանի պետական տնտեսագիտական համաշարանի», Երևան, 2007, 2(1), էջ 29:

<sup>8</sup>Առաջին մանրամասն տե՛ս North Douglas, Robert P. Thomas (1973) The Rise of the Western World: A New Economic History, Cambridge: Cambridge University Press. 171 թ.

տության տեսության անբաժանելի մասը: Այդ մասին է վկայում 1993թ. Նորելյան մրցանակի շնորհումը Դ.Նորթին՝ ինստիտուցիոնալ վերլուծությունների ոլորտում հաջողությունների համար:

Ժամանակակից տնտեսագիտությունն այլևս կասկածի տակ չի դնում կարգավորող ինստիտուտների (այսուհետ՝ ինստիտուտներ) նշանակությունը տնտեսական զարգացման գործում: Հաճախակի է այս փաստը, որ ինստիտուտների կայունությունն ու արդյունավետությունը ներդրումների և ծեռնարկատիրության զարգացման հիմնական պայմանն են:

Դրա հետ մեկտեղ, պետք է հաշվի առնել ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ հետևյալ նոտեցումները.

1. Ինստիտուտների բազմակողմանի և ընդգրկուն բարեփոխումների անհրաժեշտություն հիմնականում չկա: Բարեփոխումների ռազմավարությունը պետք է ուղղված լինի հիմնական ինստիտուցիոնալ սահմանափակումներին:
2. Միևնույն նպատակին կարելի է հասնել տարբեր ինստիտուցիոնալ որոշումների օգնությամբ: Ինստիտուտների ներճուծումը պետք է հանապատասխան տեղական պայմաններին նրանց հարմարվողականությանը:
3. Հաշվի առնելով ելակետային պայմանների կարևորությունը և տեղական պահույթները՝ բարեփոխում իրականացնողները պետք է պատրաստ լինեն ինստիտուցիոնալ փորձարկումների, նաև իրենց քաղաքականության շուկանոր՝ բարեփոխման արդյունքների վերահսկման և գնահատման հիման վրա: Այն մեծացնում է բարեփոխումների վերաբերյալ կառավարության որոշումների ընդունման թափանցիկությունը և արդյունավետությունը:
4. Հատ կարևոր է ուշադրություն դարձնել այն ինստիտուտներին, որոնք ապահովում են տնտեսական կայունություն արտաքին ցնցումների նկատմամբ: Այդիսիք են, օրինակ, սոցիալական պաշտպանվածության հանակարգը, կառավարության և սոցիալական խմբերի միջև երկխոսության մեխանիզմները և այլն:

Անկախ այն հանգամանքից, թե ինչ ինստիտուտներ է ենթադրվում ստեղծել, միշտ էլ գործնական խնդիրը պետության կարողությունը և առանձնահատկությունները մկանի ունենալը է: Պետություններն իրենց կարողությունների առումով միանգանյան տարրեր են, և այդ առօսնով անցումային տնտեսությունները բացառություն չեն կազմում: Կարևոր է հասկանալ, թե ինչպիսի գործառույթներ ու ինստիտուտներ կարող են օգտակար լինել շուկայական տնտեսության արդյունավետ գործառնության համար:

Ընդհանուր առնամբ, կարող ենք եզրահանգել, որ ինստիտուտների որակն ու, առհասարակ, ինստիտուցիոնալ միջավայրը համաշխարհային տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն ունեն:

**Նետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:** Նետազոտության թեմայի շրջանակներում բարձրացված հարցերը հետազոտվել են հայրենական և օտարերկրյա բազմաթիվ գիտնականների հրապարակումներում, որոնք մանրանասն քննարկվել են ատենախոսությունում: Այդ հետազոտություններից կարելի է առանձնացնել, մասնավորապես հետևյալ աշխատությունները:

**Ա.Սարգսյանն** ուսումնասիրել է տնտեսական համակարգի բարեփոխումները սիներգետիկ մեթոդաբանության համատեքստում, տնտեսական համակարգային բարեփոխումների փորձից ելնելով, վերլուծել է այնպիսի ինստիտուցիոնալ ծուլակեներ, ինչպիսի են կոռուպցիան, հարկերի վճարումից խոսափելը, ինքնավերադատորվող հորենտեսական սպասումները, ապրանքափոխանակությունը, վճարումնե-

<sup>9</sup>Գ. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսության ինստիտուցիոնալ համակարգի և տնտեսական խթանների շրջանակը, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2009, 1(16), էջ 22:

ոի ճգնաժամը և այլն: Յեղինակը շուկայական և ինստիտուցիոնալ եղանակների «օպտիմալ հաշվեչոր» ձևավորումը ներկայացնում է որպես տնտեսության արդիականացման, առաջադիմության և բարգավաճման ձգտող ցանկացած հասարակության գերխնդիր<sup>10</sup>:

**Ա.Մարկոսյանը** հիմնականում անդրադարձել է շուկայական հարաբերությունների պայմաններում պետության տնտեսական դերին, տնտեսության պետական կարգավորման մեթոդաբանությանը, ՅՅ տնտեսության պետական կարգավորման համակարգին և բարելավման ուղղություններին, մակրոտնտեսական վերլուծությանը և պետական կարգավորման լծակներին, պետական և մասնավոր ծեռնարկատիրությանը, բաժնետիրական ընկերությունների կառավարման, սնանկացման և լուծարման հիմնախնդիրներին, շուկայական հարաբերությունների պայմաններում գնագոյացմանը, զների քաղաքականության ռազմավարության և մարտավարության հիմնական ուղղություններին<sup>11</sup>:

**Ա.Ռ.Դարբինյանը** հետազոտել է ժողովրդավարության և ազատ շուկայի փոխհարաբերությունների հետ կապված հարցերը, համակարգել այդ ինստիտուտների առաջնայնության հիմնախնդիրները, ներմուծել է երկրում ժողովրդավարության առկայության չափանիշներ, ինչպես նաև մատնաճշել Հայաստանում իշխանության եկած թիմի շարժման երեք հմարավոր ճանապարհները, հավանական համարելով Հայաստանում ավտորիտար շուկայական համակարգի արկայությունը, որի դեպքում զոհաբերվում են ժողովրդավարությունը և ժողովրդավարական արժեքները, իսկ առաջնին պլան են նշվում ազատականության և շուկայական տնտեսության գաղափարները<sup>12</sup>:

**Ա.Մարիբեկյանը** հետազոտել է Հայաստանի Հանրապետության հասարակական-տնտեսական ներուժը, վերջինիս բացահայտման խնդիրները և ազգային առաջնահերթությունները, ազգային ամբողջական ներուժը և զարգացման տրամաբանական ամբողջությունը, Հայաստանի հասարակական-տնտեսական զարգացման հոգևոր մշակութային առաջնայնությունները, հասարակական-տնտեսական համակարգի կառավարման արդի հիմնախնդիրները և Հայաստանի կառավարման արդի հայեցակարգը, նոր զարգացուների ներքո Հայաստանում իրականացվող կառուցվածքային քաղաքականությունը և վերջինիս բարելավման ուղիները, հասարակության զարգացման արդի հիմնախնդիրները և նոտեցումները<sup>13</sup>:

**Ա.Վ.Դարբինյանն** իր հետազոտություններում անդրադարձել է միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացի էությանը, գործոններին, փուլերին, գլոբալացման հետ կապին, անցումային տնտեսությունների և մասնավորապես՝ Հայաստանի տնտեսական ինտեգրման հիմնախնդիրներին: Յեղինակի հետազոտություններում մեծ տեղ է հատկացված Հայաստանի տարածաշրջանային և գլոբալ տնտե-

<sup>10</sup>Ա.Մարգարյան, Տնտեսական համակարգի բարեփոխումները սիներգետիկ մեթոդաբանության համատեքսություն, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալրաբանի», Երևան, 2008, 1(13), էջ 7-20,

<sup>11</sup>Ա.Մարգարյան, Տնտեսության արդիականացման տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ գործոնների փոխհարաբերության հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալրաբանի», Երևան, 2011, 2(23), էջ 7-23:

<sup>12</sup>Ա. Մարկոսյան, Պետությունը և շուկան. Եր., «Ժիգրան Սեճ», 2000, 560 էջ:

<sup>13</sup>Ա.Բ.Դարբինյան, Демократия и свободный рынок: оспариваемая первичность в практике переходного периода. Материалы международной конференции «Переходные экономики в постиндустриальном мире: вызовы десятилетия» 20-21 марта 2006, <http://www.iiep.ru/ru/demokratiya-i-svobodnyi-rynok-osparivaemaya-pravichnost-v-praktike-pere-odnogo-perioda-2.html>

<sup>14</sup>Ա. Մարիբեկյան, Հասարակական-տնտեսական զարգացման արդի խնդիրները /Ա.Ս.Մարիբեկյան. Եր.: ԵճՊՐ, 2012., 200 էջ:

սական ինտեգրման հեռանկարներին, ինչպես նաև անցումային շրջանում ինտեգրման իմանական ուղղություններին<sup>14</sup>:

**Գ.Կիրակոսյանն** իր հետազոտություններում անդրադարձէ և գլոբալացմանը և դրա հետևանքներին, երկրների տնտեսությունների ազատականացման քաղաքականությամբ, զարգացած երկրների կողմից վարվող հովանավորչական գործիքներին, իսկ երկու երկրների տնտեսությունների բնութագրերը և ժամանակի ընթացքում դրանց զարգացման նակարդակների տարրերությունները ուսումնասիրել է այդ երկրների տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվության նակարդակների և դրանց հիմնա վրա ծևավորված տնտեսական վարչագծերի տարրերությունների հիմնա վրա<sup>15</sup>:

**Գ.Վարդանյանն** ուսումնասիրում է գլոբալացման պայմաններում երկրի մրցունակության բարձրացման հիմնախնդիրները՝ հիմնված գիտելիքահենք տնտեսության ծևավորման և տեխնոլոգիական առաջնորդացի վրա: Յեղինակը բացահայտում է այն հասարակությունների հիմնական բնութագրերը, որոնց օրենքներն ու սովորությները հնարավորություն են տալիս որպես գործնական քաղաքականություն հաջողությամբ իրականացնել տեխնոլոգիական առաջնորդաց, ինչպես նաև այն գործառությներն ու ինստիտուտները, որոնք կարող են օգտակար լինել շուկայական տնտեսության և, մասնավորապես, գիտալիքահենք տնտեսության արդյունավետ գործառնության համար<sup>16</sup>:

**Զ.Թաղևոսյանը** վերլուծում է կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիայի փոխազդեցության տեսական ու գործնական հիմնախնդիրները, ներկայացնում է կապիտալի շարժի միջազգային կարգավորման արդի փորձը և համաշխարհային տնտեսության վրա արտադրության գործնների ազդեցության գնահատականը, ինչպես նաև հետազոտում է Հայաստանի տնտեսության նորարարական հիմքերը համաշխարհային տնտեսության հիմտեգրվելու համատեքստում<sup>17</sup>:

**Է.Սանդոյանը** ներկայացնում է ՀՀ տնտեսական միջավայրի ինստիտուցիոնալ բարեփոխումներին և միջազգային մրցունակությանը միտված մոտեցումներ, մասնավորապես՝ իր ուշադրությունը կենտրոնացնում է սեփականության իրավունքի պաշտպանության և մրցակցային միջավայրի կայացման հիմնախնդիրների վրա, որոնց շրջանակներում Հայաստանի կայուն տնտեսական զարգացումը կապվում է մԱՀ-երի միջոցով օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտադրության մոդեռնացման, կորպորատիվ մշակույթի ծևավորման, կրթության որակի բարելավման և գիտելիքի առևտորայնացման ուղղություններում<sup>18</sup>:

<sup>14</sup>Ա. Դարբինյան, Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործնթացում: Երևան, «Պետական ծառայություն», 2000, 302 է:

<sup>15</sup>Գ.Կիրակոսյան, Գլոբալացումն և դրա հետևանքները, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում» Երևան, 2004, 1, էջ 3-11, Գ.Կիրակոսյան, Տեղեկատվություն և տնտեսական վարչագիծ, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համապարան», Երևան, 2006, 2(8), էջ 3-11:

<sup>16</sup>Գ.Վարդանյան, Տնտեսական զարգացման ռազմակարության որոշ հարցեր, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում», Երևան, 2005, 1(4), էջ 79-97, Գ.Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսության ինստիտուցիոնալ համակարգը և տնտեսական իրաների շրջանակը, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համապարան», Երևան, 2009, 1(16), էջ 19-30:

<sup>17</sup>Զ.Թաղևոսյան, Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիան. Իրավիճակը և հիմնախնդիրները Հայաստանի Համապատություններ., Հեղինակային հրատարակություն, 2005, 267 էջ: Զ.Թաղևոսյան Կապիտալի միջազգային միգրացիա (հասակության տեքստ). Եր., Տնտեսագետ, 2003, 64 էջ: Զ.Թաղևոսյան, ՀՀ նորաստեղծական ներուժի զարգացումն առաջնահերթ խնդիր է, Հայաստանի Համապատության ուղղության տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները: Գիտաժողովի նյութեր /ՐԱԾ, Ուսուովի ՊՏԾ (Ինլան): Խմբագրական հոդվածների համանախագահներ Կ. Վրոյան, Ն. Կոլումբով -Եր.: Տնտեսագետ, 2011, էջ 31-36:

<sup>18</sup>Յ. Սանդոյան, Էկономика Արմենիա: Современное состояние, тенденции и проблемы; Пятерая Годичная научная конференция (6-10 декабря 2010г.). Сборник научных статей: В 2 ч. – Социально-гуманитарные науки. Часть 1.- Ер.: Изд-во РАУ, <https://www.box.com/s/phffiqu5cz8p9aled60b>; Է.Սանդոյան Լիարդեր օպտագործենք հնարավորությունները, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N3, մարտ, 2010, էջ 10-17:

**Թ.Թորոսյանի** ուսումնասիրությունները վերաբերում են արտահանման խթանմանը, արտաքին տնտեսական գործունեության պետական կազմակերպչական, տեղեկատվական, վիճակագրական, նարքեթինգային ու հետազոտական աջակցությանը, աշխարհի տարբեր երկներում արտադրության և սպառնան շուկաների իրավիճակի վերաբերյալ օպերատիկ առևտրային տեղեկատվությանը և այլն: Հեղինակն ուսումնասիրում է արտաքին առևտրի ոլորտում ակտիվ միջամտության և արտահանման պետական խթանման օպտիմալ ձևերն ու առաջարկում է արտահանման աջակցության համակարգի մեխանիզմներ:

**Յ.Աղաջանյանը** հիմնականում ուսումնասիրել է տնտեսության պետական կարգավորման ինստիտուցիոնալ հիմքերը, առանձնապես հետազոտությունները կենտրոնացնելով հասարակական ընտրության և տնտեսության պետական կարգավորման, տնտեսական և քաղաքական համակարգերի փոխհարաբերությունների, ինչպես նաև ինստիտուցիոնալիզմի և տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրների վրա: Հեղինակն իր հետազոտություններում ռացիոնալի և իրացիոնալի սահմանների հետ կապված հարցերը, իսկ տնտեսական համակարգը վերլուծել է ռացիոնալի և իրացիոնալի համադրության համատեքստում:

**Դ.Սարգսյանը** հետազոտել է տնտեսության վերափոխման գործնթացին պետության մասնակցության հիմնախնդիրները, ՀՀ-ում տնտեսական վերափոխումների առաջին արդյունքները, գյուղատնտեսության ոլորտում իրականացվող բարեփոխումները, սոցիալ-ժողովրդագրական քաղաքականությունը, դրամավարկային քաղաքականության հիմնական առանձնահատկություններն ու ֆինանսական կայունության խնդիրները, ինչպես նաև արտաքին առևտրային քաղաքականությունն ու սեփականության իրավունքի պաշտպանությանը միտված խնդիրները, որոնց հիմնային վրա հեղինակի կողմից նշակվել են ՀՀ տնտեսության արդիականացման ապագային միտված հանձնարարականներ:

**Յու.Սուվարյանն** իր հետազոտություններում անդրադարձել է կառավարման ժամանակակից տեսության և պրակտիկայի հիմնահարցերին՝ լուսաբանելով կառավարման կատեգորիաների, մեթոդների, գործառույթների, կոմունիկացիաների, կառավարչական որոշումների ընդունման հիմունքները, խնդերի և կոնֆլիկտների կառավարման, իշխանության ձևերի, առաջնորդման տեսությունները, ՀՀ տնտեսության պետական կառավարման համակարգի, գործարարության իրավական դաշտի առանձնահատկությունները: Հեղինակն անդրադարձել է նաև Հայաստանում հանրային կառավարման տեսության և պատմության հիմնախնդիրներին՝ պատմական համատեքստում հիմնափորելով ՀՀ տնտեսության ազատականացման ինստիտուցիոնալ առաջնահերթությունները:

**Յու.Սուվարյանը, Վ.Դարությունյանը, Վ.Սարգսյանը և Վ.Խաչատրյանն** իրենց աշխատություններում հետազոտել են տնտեսական զարգացման և գիտակրթական

<sup>19</sup>Թ.Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, Ուսումնագործնական ձեռնարկ, Երևան, ԱՌԸ, 2003, 256 է:

<sup>20</sup>Դ.Աղաջանյան, Պետությունը և տնտեսությունը.- Եր.: Տնտեսագետ, 2003, 400 էջ; Աղաջանյան Դ., Ուսցիուալի իրացիոնալ սահմանները տնտեսական հարաբերություններում, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2006, 2(8), էջ 12-28; Աղաջանյան Դ., Տնտեսական համակարգը՝ որպես ռացիոնալի և իրացիոնալի համադրություն, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2006, 3(9), էջ 3-20:

<sup>21</sup>Վ.Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը, ՈԱՀՀԿ, Երևան, 2001, 69 էջ:

<sup>22</sup>Մենքընթեր: ՀՀ ԳԱԱ թորակից անդամ Յու. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ (Երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն), 2009, Եր.: Տնտեսագետ, 608 էջ; Յու.Սուվարյան, Հայաստանում հանրային կառավարման տեսության և պատմության ուրվագծեր, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», Երևան, 2004, 1, էջ 12-29:

համակարգի ներազեցության գնահատման մեթոդաբանությունը, կրթության, գիտության ու ՀՀ տնտեսական զարգացման համակարգի փոխադարձ կապը, կրթության ոլորտում արևակարգի հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները, ինչպես նաև մշակվել են երաշխավորություններ տնտեսական զարգացման և գիտակրթական համակարգի ներազեցությունն ինտենսիվացնելու համար: Յեղինական ներքի ներկայացրել են նաև գիտակրթական համակարգի և արտադրության հնարավորության հայեցակարգային հիմնախնդիրները ռազմավարական գերակայությունների և կառուցակարգերի համատեքստում<sup>23</sup>:

**Ո.Սարինյանը** հետազոտել է տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրը գլոբալացման պայմաններում, ներկայացրել գլոբալացման վերաբերյալ տարբեր հեղինակների դիտարկումները, այդ թվում՝ բաց հասարակության տեսության մեջ ազգերի և պետությունների տեղը գլոբալ համակարգում: Յեղինակը գլոբալացման երևույթները գնահատելիս ելակետ է ընդունում այն հատկանիշը, որ իրենց նոր կարգավիճակով անհանդանատ կսահմանափակվեն պետությունների «ինքնիշխան» գործառույթները, վերածվելով նշանակալի պատճենագործություն՝ վերազգային և ենթազգային մշխանդիմների օրինականության ապահովման ու պատասխանատվության բարձրացման հաստատության<sup>24</sup>:

**Ս.Դավիթյանը, Ա.Մարկոսյանը և Ր.Սարգսյանը** ուսումնասիրել են անցումային տնտեսություն ունեցող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, Զայաստանի Հանրապետությունում պետության տնտեսական գործառույթները և տնտեսական քաղաքականությունը, սեփականության ինստիտուտի կայացման և բնական պաշարների կառավարման հետ կապված խնդիրները, պետական գույքի օգտագործման կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը, դրանց զարգացման նախադրյալները և հեռանկարները, պետական գույքի օգտագործման կառավարման արդյունավետության ցուցանիշները, պետական սեփականության գրանցամատյանի ձևավորման հիմքերը, գույքի և նրա տարրերի գնահատումը, Զայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհների կարգավորման արանձնահատկությունները, ամսնարունակության (սնանկացման) հիմնախնդիրները և այլն<sup>25</sup>:

**Դ.Աշենօղլուի, Ա.Ջոնսոնի և Զ.Ռոբինսոնի** հետազոտությունում ինստիտուտների և թույլ ինստիտուտներ ունեցող երկրներում ինստիտուտների և ցարք տնտեսական կայունության միջև կապը: Մասնավորապես, ոչ կայուն մակրո-տնտեսական քաղաքականությամբ բացասական հետևանքները մեղմ են անդրադարձել այն երկրների տնտեսությունների վրա, որոնք ունեն ավելի կայուն ինստիտուտներ: Դ.Աշենօղլուի հեղինակային խումբը պատճական համատեքստում ուսումնասիրություններ է կատարում նաև գաղութաբնակների գոյատևման ցուցանիշի միջոցով, ինչը բարձրացնում է վերլուծության համարդելիությունը<sup>26</sup>:

**Դ.Նորթը**, վերանայելով ռացիոնալիզման հասկացությունը, հատուկ շեշտադրում է կատարում երկու սկզբունքային խնդիրների վրա: առաջինը ծագում է մարդու աշխարհընկալման ժամանակ՝ նրա բազմաթիվ փաստերով, երկրորդը՝ այդ փաստերն ըստ կարևորության և օպտիմալ ընտրության դասակարգելու ժամանակ:

<sup>23</sup>Յու. Սուվայրյան և ուրիշներ, Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը /Յու.Ս.Սուվայրյան, Վ.Զարությունյան, Վ.Սարգսյան, Վ.Խաչատրյան. Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 150 էջ; Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը/ Յու.Սուվայրյան, Վ.Զարությունյան, Վ.Սարգսյան. Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 232 էջ:

<sup>24</sup>Դ. Սարինյան, Գլոբալացում. դիտարկումներ, «Քանդեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան», Երևան, 2007, 1(10), էջ 3-26; Ո.Սարինյան, Պացիոնալի և հացիոնալ սահմանները, «Բանքը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան», Երևան, 2007, 2(11), էջ 5-27:

<sup>25</sup>Ս.Դավիթյան, Ա.Մարկոսյան, Ր.Սարգսյան, Համակարգային և հնարավություններ անցումային երկրների տնտեսություններում, Եր., Տիգրան Մեծ, 2003, 656 էջ:

<sup>26</sup>Acemoglu Daron, Simon Johnson, James Robinson (2001) The Colonial Origins of Comparative Development: An Empirical Investigation, American Economic Review, Vol. 91: 1369–1401.

Դ.Նորթի վերլուծությունը համգեցնում է ինստիտուտների ավելի խորը ընկալմանը և ինստիտուցիոնայ հետազոտությունների նոր ասպարեզների բացահայտմանը<sup>27</sup>:

**Դ.Նորթի և Ո.Թռնասի աշխատության մեջ ապացուցվում է, որի ինստիտուտները տնտեսական աճի կողմնակի արդյունք չեն, իսկ հիմնական կապիտալուն ներդրումները՝ աճի հիմնական գործոն, և եղինակներն առաջարկում են մեկ այլ վարկած, որի համաձայն՝ երկրների միջև աճի տեսքի տարբերությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ տարբերությամբ<sup>28</sup>:**

**Դ.Ոոդրիկի, Ա.Սարբամանիանի և Ֆ.Տրեբբիի հետազոտության համաձայն՝ ինստիտուտների որակի գործոնը ավելի լավ է բացադրում երկրների միջև երկարաժամկետ աճի տեսմանը տարբերությունը:**

Եղինակների կարծիքով, ներդրումները տնտեսական աճն ինստիտուցիոնալ գործոնների հետ կապող մեխանիզմներից մեկն են: ՆԱ-ում ներդրումների մակարդակի և ինստիտուցիոնալ փոփոխականների միջև հակադարձ կապի արկայությունը հաստատվում է նաև եղինակների էմպիրիկ հետազոտություններում<sup>29</sup>:

**Լ.Ֆրեյնմանի, Վ.Դաշկեևի և Ս.Մուֆյախսետիկնովայի կողմից կատարված հետազոտություններում հասուլ ուշադրությունը են դարձվում իրավական ինստիտուտների զարգացման մակարդակին, որոնք ապահովում են անձնական և սեփականության անձնանմխելությունը և ընդգծում են դրանց ազդեցությունն աճի վրա: Եղինակներն այդ ինստիտուտների յուրահատուկ դերը համարում են իհմք՝ առավել բարդ մեխանիզմների կառուցման հանար: Նրանց կարծիքով, անձի անձեռնմխելության և կյանքի հուսալի երաշխիքների բացակայության դեպքում մասնավոր սեփականության իրավունքների երաշխիքներն իմաստագրկվում են<sup>30</sup>:**

**Մ.ՂԵ ՄԵԿԻՆ և Ա.ԳԵԼԲԸ ուսումնասիրել են տնտեսական աճի վրա տնտեսության ազատականացման ազդեցությունը: Այստեղ եղինակներն օգտագործել են իրենց կողմից հաշվարկված ազատականացման ինդեքսը, որը ներառում է ներքին շուկաների ազատականացման մակարդակը, արտաքին առևտորի ազատականացման մակարդակը և մասնավորեցման ծավալը: Ցույց է տրված, որ անցումային երկրներում 1990-ական թվականների առաջն կեսին այս ինդեքսը սերտորեն կապված էր տնտեսական աճի հետ<sup>31</sup>:**

**Ս.Օվլոնը** մատմանշում է հետպատերազմյան Գերմանիայում և ճապոնիայում ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների արդիականացման դերն այդ երկրների զարգացման գործում: Ըստ եղինակի՝ նոր տնտեսական համակարգերը, որոնք ստեղծվել են այդ երկրներում ազատ մրցակցության պայմաններում և փոխարինում են նախապատերազմյան շրջանի մենաշնորհային համակարգերին, նպաստել են տնտեսության վերականգնմանն ու հետազ առաջացմանը<sup>32</sup>.

**Զ.Գոռքնին, Ռ.Շոլքոմբը և Ո.Լոուլունը**, ուսումնասիրելով իրավիճակը 60 երկրներում, սահմանել են, որ «կառավարության չափերի 10 տոկոսով ընդլայնումը (զմահատված որպես ՆԱ-ի մկատմամբ պետական ծախսերի մակարդակ, %)

<sup>27</sup>Норт Дуглас, Институты, институциональные изменения и функционирование экономики /Пер. с англ. А.Н. Нестеренко; предисл. и науч. ред. Б.З. Мильнера. — М.: Фонд экономической книги “Начала”, 1997. — 180 с. (Современная институционально-эволюционная теория).

<sup>28</sup>North Douglas, Robert P. Thomas (1973) The Rise of the Western World: A New Economic History, Cambridge: Cambridge University Press., 171 p.

<sup>29</sup>Rodrik Dani, Arvind Subramanian, Francesco Trebbi (2002) Institutions Rule: The Primacy of Institutions over Geography and Integration in Economic Development, NBER Working Paper No. 9305, 44p.

<sup>30</sup>Анализ институциональной динамики в странах с переходной экономикой /Л. М. Фрейнкман, В. В. Дашкеев, М. Р. Муфтиядинова – М.: ИЭПП, 2009. 252 с.

<sup>31</sup>De Melo Martha, Alan Gelb (1997) Transition to Date: A Comparative Overview, in Salvatore Zecchini, (Ed.) Lessons from the Economic Transition: Central and Eastern Europe in the 1990s. Dordrecht: Kluwer, pp. 59-78.

<sup>32</sup>M. Olson, «The New Institutional Economics: The collective Choice Approach to Economic Development» in Clague et al. (1997), 276 p.

տվյալ ժամանակաշրջանի սկզբում նույնացվում է տնտեսական աճի տեմպի մոտ 0,6% կրճատմամբ հետագա 15 տարիների ընթացքում։ Հեղինակների կարծիքով, եթե կառավարության գործունեությունը սահմանափակված է «հիմնական գործառույթներով», դրա ժախսերը կազմում են մոտավորապես ՀՆԱ-ի 15%-ը և վերջինիս ցանկացած գերազանցում «բացասաբար է ազդում ազգի բարեկեցության վրա»<sup>33</sup>։

**Ֆ.Ա. ֆոն Շայեկն** իր հիմնարար աշխարությունում անդրադառնում է սոցիալիստական հասարակարգի արմատական ըննադատությանը, անհատապաշտության և կոլեկտիվիզմի գաղափարներին, պլանավորման և ժողովրդավարության հակասականությանը, գուգահեռներ է անցկացնում պլանավորման և օրենքի գերակայության, տնտեսական վերահսկողության և տոտալիտարիզմի, ինչպես նաև հիմնավոր եզրահանգումներ կատարում ազատության և պաշտպանվածության կատեգորիաների համադրության համատեքստում<sup>34</sup>։

**Այսպիսով, չնյայած հետազոտության թեմայի շուրջ կատարված բազմաթիվ հետազոտությունների առկայությանը, Շայաստանի ինստիտուցիոնալ միջավայրը երեկոյում չի պապակիւմ տնտեսության ներյաշակ զարգացումն երաշխավորող որակ, ընդ որում, ինստիտուտների հետ կապված գլխավոր խնդիրները վերաբերում են թե՝ պետական և թե՝ մասնավոր ինստիտուտներին՝ ներառյալ փոքր բաժնետերերի հրավիլներում, կորպորատիվ կառավարումն, դատական անկախությունը և կազմակերպությունների բարոյական վարքագիծը, մրցակցային միջավայրը, հակակոռուպցիոն վերահսկողությունը և ի վերջո, տնտեսության միջազգային մրցունակությունը<sup>35</sup>։**

Քաշվի առնելով վերոգրյալը, առանձնակի կարևորություն են ստանում ինստիտուտների երթյան, ինստիտուցիոնալ բարեփոխումների հետազոտությունը, անցումային տնտեսության պայմաններում ինստիտուցիոնալ գործուների և տնտեսական զարգացման փոխկապվածության ուսումնասիրությունը, միջազգային մրցունակությանը միտված պետական կարգավորման ձևերի և սահմանների ընտրությունը, որոնց էլ նվիրված է ատենախոսությունը։

Վերը նշվածով է պայմանավորված հետազոտության համար ընտրված թեմայի արդիականությունը, իսկ ուսումնասիրության համար Շայաստանը դիտարկվել է համաշխարհային տնտեսության համատեքստում՝ համարական հետազոտության միջոցով բացահայտելով ՀՀ ինստիտուցիոնալ հետազնացության հիմնական թիրախները։

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ալենախոսության հիմնական նպատակն է՝ հետազոտել համաշխարհային տնտեսության աճի տեմպերի և ինստիտուտների գործունեության տեսագրօնական հիմքերը, բացահայտել ինստիտուցիոնալ բարեփոխումների համաշխարհային միտուները և այդ համատեքստում՝ Շայաստանի ինստիտուցիոնալ մրցունակության բարձրացնան առաջնահերթությունները։

Այդ նպատակի իրագործման համար դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները։

- հետազոտել ինստիտուտների տեսագրօնական հիմքերը, բացահայտել ժամանակակից տնտեսական աճի ինստիտուցիոնալ նախադրյաները և դրանց ձևավորման հիմնական մուտքումները,
- ուսումնասիրել համաշխարհային տնտեսության աճի տեմպի և ինստիտուտների որակի միջև փոխադարձ կապի վերաբերյալ ժամանակակից հետազո-

<sup>33</sup>Gwartney J., Holcombe R., Lawson R. The Scope of Government and the Wealth of Nations // Cato Journal. 1998. Vol. 18.No. 2.P. 163–190.

<sup>34</sup>Хайдек Фридрих Август фон, Дорога к рабству / Пер. с англ. М.: Новое издательство, 2005, 264 с.

<sup>35</sup>Շայաստանի ազգային մրցունակության գելույց, 2008, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, էջ 33–34, Շայաստանի ազգային մրցունակության գելույց, 2009, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2009, Նորարարության էկոհամակարգի սերմանումը, էջ 26:

- տուրքունները և գնահատել ինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունը անցումային տնտեսությանը երկրների տնտեսական աճի վրա,
- գնահատել ինստիտուտների, ժողովրդավարության և տնտեսական ազատության բնութագրերը համաշխարհային տնտեսությունում՝ բացահայտելով համաշխարհային տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ իիմքերը և հիմնական միտումները,
  - միջազգային ցուցչների միջոցով գնահատել Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցուցանիշների փոխադարձ կապը, այն դիտարկել համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում և բացահայտել Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման ներկայականությունը ու խոչընդոտումները,
  - գնահատել ինստիտուցիոնալ իմաստով աշխարհի առաջատար երկրների և Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ խզման ցուցանիշների համաշխափությունը, որը հնարավորություն կընծերի բարելավման ներդաշնակ քաղաքականության իրականացման համար համարել այդ ցուցանիշների փոփոխության դիմամիկան,
  - ՀՅ համեմատական ինստիտուցիոնալ զարգացման դիմամիկան հետազոտել մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելի կիրառմամբ, որը հնարավորություն կընծերի Հայաստանի ինստիտուցիոնալ իմանախնդիրները քանակապես դիտարկել ժամանակի և տարածության մեջ՝ միջերկրային համատեքստում,
  - մոդելավորման արդյունքների հիման վրա գնահատել ինստիտուցիոնալ իմաստով աշխարհի առաջատար երկրների և Հայաստանի միջև փաստացի ու հաշվարկված ինստիտուցիոնալ խզումը՝ դրանով իսկ բացահայտելով Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման ներուժի ու բացրումների քանակական գնահատականները,
  - բացահայտել Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման առաջնահերթությունները՝ միջազգային մրցունակության բարելավման և նորարարական տնտեսություն կառուցելու հիմնախնդիրների առավելագույն շեշտադրմամբ:

**Հետազոտության առարկան և օբյեկտը:** Հետազոտության առարկան համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման օրինաչափություններն են և այդ ընթացքում ժագող միջերկրային հարաբերությունները, իսկ հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրը՝ միջազգային մրցունակության բարելավման քաղաքականությունն ինստիտուցիոնալ բարեփոխումներին համահունչ իրականացնելու հիմնախնդիրի շեշտադրմամբ:

**Հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական իիմքերը:** Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության հիմնարար դրույթները, համաշխարհային տնտեսության և Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի վերաբերյալ հայ և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, ՀՅ օրենքները, ՀՅ կառավարության որոշումները, ՀՅ գերատեսչական նորմատիվ ակտերը, միջազգային կազմակերպությունների գեկույցներն ու այլ իրավարակումները:

**Հետազոտության իրականացման ժամանակական վերլուծության մաթեմատիկական մոդելու կառավարման մաթեմատիկական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման, փորձագիտական գնահատման, գրաֆիկական վերլուծության ու համադրման, տվյալների զանգվածների վիճակագրական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:**

**Հետազոտության տեղեկատվական ապահովման համար օգտագործվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հրապարակումները, ՍԱԿ-ի, Հանաշխարհային բանկի, Հանաշխարհային տնտեսական ֆորումի, միջազգային այլ կազմակերպությունների և հետազոտական կենտրոնների գեկուցներն ու այլ հրապարակումները:**

**Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:** Ալենա-խոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթը արտացոլող հիմնական դրույթներն են.

• տարեք հետազոտությունների (այդ թվում՝ 149 երկրների և 180 տարի ընդգրկող ժամանակահատվածի համար) արդյունքների համադրման և ամփոփման հիմնա վրա գնահատվել է համաշխարհային տնտեսության զարգացման վրա կարգավորող ինստիտուտների, ժողովրդավարության, իրավունքի նորմների և տնտեսական ազատության ազդեցությունը՝ բացահայտելով երկարաժամկետ տնտեսական աճի և ինստիտուցիոնալ զարգացման կայուն վիճակագրական կախվածությունը, որը հիմք է տալիս առավելապես անցումային տնտեսությանը երկրի տնտեսական քաղաքականությունը կառուցել ինստիտուցիոնալ առաջնահերթություններից ելեւով.

• ինստիտուցիոնալ մրցունակությունն առավել ստույգ բնորոշող միջազգային 7 ցուցիչների միջոցով գնահատվել է Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցուցանիշների փոխադարձ կազմ ինստիտուցիոնալ զարգացման տարբեր ճակարտական ունեցող 214 երկրների համանան ցուցանիշների համադրության մեջ՝ բացահայտելով Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացման ներկա մակարդակն ու զարգացման խոչընդոտները, այդ թվում՝ տնտեսական, քաղաքական և ինստիտուցիոնալ գործնների անհամաչափությունը, արդյունավետ տնտեսական ինստիտուտների ճնավորման նպատակով ստղավարական բազայի ընդլայնման բացակայությունը, կոռուպցիայի ծավալի աճը ու հակակոռուպցիոն անբավարար վերահսկողությունը, սեփականության իրավունքի և ֆինանսական համակարգի փոխազդեցության անհամարժեք բնույթը, տնտեսական ինստիտուտների զարգացման գործընթացների կարգավորման և օրենսդրության միջև առկա անհամապատասխանությունը և այլն,

• ՀՀ ինստիտուցիոնալ զարգացման դիմանիկան (1996-2011թ.) հետազոտվել է մոդելիկացված գրավիտացիոն մոդելի կիրառմանը (աշխարհի 48 երկրների տվյալների համադրության հիմն վրա՝ որպես փոփոխականներ դիտարկելով ինստիտուցիոնալ զարգացման 4 և 6 բաղադրիչներով հիմքանությունը, արտաքին առևտությունը բացության ցուցանիշը, երկրների միջև աշխարհագրական հեռավորությունն ու մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը, որի հիմնա վրա հնարավոր է դարձել Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ հիմնախնդիրները քանակական դիտարկել ժամանակի և տարածության մեջ, ընդ որում՝ ապացուցվել է ինստիտուտների զարգացման գործում երկրների տնտեսությունների բացության և ընդհանրապես գլոբալացման գործընթացներին երկրների մասնակցության ընդգծված դրական ազդեցությունը, իսկ նշանակած երեք գործուները՝ արտաքին առևտությունը բացության ցուցանիշը, երկրների միջև աշխարհագրական հեռավորությունը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը կարելի է համարել առաջատար ինստիտուտներ ունեցող երկրներից տնտեսական ինստիտուտների զարգացման շեղումների բացարության հիմնական ցուցանիշներ,

• ժամանակային շարքերի տնտեսամաթեմատիկական գնահատման օգնությամբ բացահայտվել է ինստիտուցիոնալ իմաստով աշխարհի առաջատար երկրներից (որպես հարաբերական առաջատար ինստիտուտներ ունեցող երկրներից տնտեսական ինստիտուտների զարգացման շեղումների բացարության հիմնական ցուցանիշներ),

տիտուցիոնալ և տնտեսական խզումների փոխկապվածության բնույթը, ինչպես նաև գնահատվել է աշխարհի առաջատար երկրներից Հայաստանի փաստացի և գնահատված հնստիտուցիոնալ խզումը՝ դրանով իսկ անրագրելով Հայաստանի տնտեսության հնստիտուցիոնալ և տնտեսական զարգացման ներուժի ու բացրողումների քանակական արժեքները, որոնց հիմնական առանձնահատկությունն այն է, որ ՀՀ տնտեսական հնստիտուտներն իրենց զարգացման մակարդակով առաջ են անցել տնտեսության զարգացումը բնորոշող ցուցանիշներից և նճան անհամաշափ զարգացումը կարող է համգեցնել հնստիտուցիոնալ խզման սահմանային չափերի, իսկ վատագույն սցենարի դեպքում հնստիտուցիոնալ շղկի:

• Կատարված որակական և քանակական հետազոտությունների արդյունքում բացահայտվել են Հայաստանի տնտեսության հնստիտուցիոնալ զարգացման առաջնահերթությունները՝ միջազգային մրցունակության բարելավման և նորարարական տնտեսություն կառուցելու հիմնախնդիրների առավելագույն շեշտադրմամբ, որպես հիմնական գերակայություններ անրագրելով հետևյալ ուղղությունները. արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորումը, շուկայում նոր ընկերությունների մուտքի խթանմամբ, ֆինանսական շուկաների զարգացումը, հետազոտությունների մրցունակ ոլորտի համար պայմանների ստեղծումը, նորարարական արդյունավետ ենթակառուցվածքների ստեղծումը, մտավոր սեփականության իրավունքի կիրառման և պաշտպանության հնստիտուտների զարգացումը, տեխնոլոգիական նորարարությունների հիմնա վրա տնտեսության արդիականացումը:

**Հետազոտության գիտագործնական և կիրառական նշանակությունը:** Հետազոտության արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Աստեղախոսության դրույթների մի մասը, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության համատեքստում Հայաստանի հնստիտուցիոնալ խզման վերաբերյալ հետազոտությունն արդեն իսկ օգտագործվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ՀՀ հնստիտուցիոնալ մրցունակության բարձրացման քաղաքականությունը մշակելու ընթացքում, հաշվի առնելով արտաքին առևտորի բացության ցուցանիշների և նորարարությունների սերտ կազմը հնստիտուցիոնալ խզման հետ:

Աստեղախոսության առանձին դրույթներ կարող են օգտագործվել ՀՀ հնստիտուցիոնալ և նորարարական մրցունակությունը բարելավելու քաղաքականության նշանակման, ինչպես նաև առանձին հետազոտությունների կողմից՝ ՀՀ տնտեսության կարգավորող հնստիտուտների կատարելագործման վերաբերյալ հետազոտությունների ժամանակ:

**Հետազոտության հիմնական արդյունքների փորձարկումը:** Հետազոտությունը բնարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի հիմսում, Հայաստանում անցկացված 19 գիտաժողովներում և գիտական կոնֆերանսներում, ինչպես նաև արտեկրում ակցիացված հետևյալ գիտաժողովներում. «Интеграция экономики в систему мирохозяйственных связей» (Սամազ-Դաշտերուրդ, ՈԴ, 2004թ.), «Актуальные проблемы мирохозяйственного взаимодействия на мега-, макро, мезо и микроуровнях» (Ոնի Ռոստով, ՈԴ, 2011թ.) և «Проблемы и перспективы на развитие на супрудничеством между странами от Югоизосточная Европа в рамках на Черноморского экономического супрудничества» (Սվիխով, Բուլղարիա, 2012թ.):

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի 48 գիտական հրապարակումներում (ներառյալ՝ 9 մենագրություն), այդ թվում՝ 8-ը արտեկրում:

**Հետազոտության կառուցվածքը և ծավալը:** Աստեղախոսությունը բաղկացած է ներառյությունից, ինճան գլուխներից, եղանակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աստեղախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 233 էջ:

## Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու իրատապությունը, ներկայացվել է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվել՝ օբյեկտը և առարկան, ձևակերպվել՝ գիտական արդյունքներն ու նորույթը, ինչպես նաև ուղղությունը են տեսական և գործնական կիրառման հնարավորությունները, ներկայացվել են աշխատանքի ժապակը ու կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին «Ինստիտուտների և համաշխարհային տնտեսության զարգացման փոխկապվածության տեսագործնական հիմքերը»** գլխում ներկայացվել և գնահատվել են ինստիտուտների հիմնական խնբերը, ինստիտուտների և տնտեսական աճի փոխկապվածությունն ու հիմնական բնորոշումները, ժամանակակից տնտեսական աճի ինստիտուցիոնալ մախարդյալները, այդ թվում՝ տնտեսական աճի տեմպի և ինստիտուտների որակի փոխադարձ կապի վերաբերյալ ժամանակակից հետազոտությունները, ինչպես նաև ինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունն անցումային երկրների տնտեսական աճի վրա:

Ինստիտուտները կարելի է դիտարկել որպես ձևական և ոչ ձևական նորմերի շարք, որոնց համապատասխանելու աստիճանն անմիջականորեն կախված է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից: Այլ կերպ ասած՝ զարգացած երկրները, որպես կանոն, առանձնանում են ինստիտուցիոնալ միջավայրի բարձր որակով: Ոչ զարգացած ինստիտուտներ ունեցող զարգացած երկրներն անհամարեալ երևույթ են համաշխարհային տնտեսական զարգացման պատմության մեջ:

Ավելի լայն իմաստով, ինստիտուտները կարելի է դիտարկել որպես մեխանիզմների և կանոնների համախումբ, որոնք պահպանում են ռեսուրսների վերաբաշխությը, նոր ներդրումների ներգրավումը, աշխատանքային ռեսուրսների վերապատրաստումը և ձևավորում են տնտեսական արդյունավետությունը խթանող համակարգեր: Ինստիտուտները կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խնբերի:

- իրավական ինստիտուտներ,
- կարգավորող ինստիտուտներ,
- մարդկային կապիտալի զարգացման ինստիտուտներ,
- տնտեսական կողորդինացման և ռիսկերի վերաբաշխման ինստիտուտներ<sup>36</sup>:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում տնտեսական աճի գործոններին և հնարավոր ու իրական աճի տեմպերի շեղումների պատճառներին: Դրա հետ կապված, վերլուծվում են առանձին հարցեր, որոնք վերաբերում են մի կողմից՝ շուկայական տնտեսության ինստիտուտների գործունեությանը և կառուցվածքին, մյուս կողմից՝ դրանց շրջանակներում իրականացվող քաղաքականության և գործիքների արդյունավետության միջև փոխազդեցությանը՝ հաշվի առնելով արտադրության երկարաժամկետ դիմամիջկայի վրա ունեցած հետևանքները:

Հասունության որոշակի մակարդակում տնտեսական մեխանիզմները երկարաժամկետ տնտեսական աճը դարձնում են ամխուսափելի: Աճի այս ինքնակարգավորիչ հատկության պատճառը արտադրողների՝ շահույթն առավելագույնի հասցնելու և սպառողների՝ լավ ապրելու օբյեկտիվ ցանկությունը: Երկարաժամկետ հեռանկարում միևնույն մակարդակում մնացող ազգային եկամտի վերաբաշխման ճանապարհով նման խնդիր հնարավոր չէ լուծել: Այստեղ արտադրության աճ է պահանջվում:

<sup>36</sup>Հեղինակի կարծիքով, վերոնշյալ չորս ինստիտուտներն եւ իրականացնում են կարգավորման գործառույթ, որից ենելով՝ ատենախոսության ընտրանքը չի սահմանափակվել միայն դասակարգման մեջ նշված կարգավորող ինստիտուտներով:

Ինչպես վկայում է տնտեսական աճի կանխատեսման համաշխարհային փորձը, սպասվող աճի տեմպերը սովորաբար գերազանցում են իրական արդյունքին:

Նման իրավիճակ ավելի շատ նկատվում էր հետխորհրդային երկրների անցունային շրջանի սկզբում, երբ արտադրության ու սպառման մասշտաբների և աճի տեմպերի վերաբերյալ ակնկալիքները նեծապես գերազանցեցին, ինչպես հետագայում պարզվեց, բավական զուսպ իրական արդյունքներին<sup>37</sup>:

Այս իմաստով, կարելի<sup>38</sup> է արդյոք մարդկային կայիտալի գարգացման գործառույթն ամբողջությամբ թողնել նոցակցային շուկայի հնատիտուտներին: Ակնհայտ է, որ շուկայական հնատիտուտների կողմից նշված գործառույթն իրականացվելու է՝ ինմբ ընդունելով սոցիալական ոլորտի ծառայությունների նկատմամբ անհատների և կազմակերպությունների վճարումնակ պահանջարկի բավարարման նախապայմանը: Ընդ որում, սոցիալական ծառայությունները (բարիքները) տրամադրվելու են մնացած ապրանքների նման՝ առևտորային հիմունքներով, որն անընդունելի է<sup>39</sup>:

Այսօր արդեն ոչ ոք կասկածի տակ չի առնում հնատիտուտների դերը, ընդհակառակը, վերջին տարիներին այն ամեն կերպ ընդգծվել է նույնիսկ պարզամիտ նեռազատական մոտեցման նախկին կողմնակիցների կողմից, ըստ որոնց՝ շուկայի «անտեսանելի ծեռքը» ինքնին կփոխի հիմ հնատիտուտները: Շատ դեպքերում ամեն ինչ այնքան էլ պարզ չէ. իրոք, ինձ ինստիտուտները պետք է կազմաքանդիվեն կամ վերանան, բայց դրանց պետք է փոխարինեն նոր ինստիտուտները, որոնց ստեղծումը դանարակ գործներաց է և մշտապես պահանջում է պետության միջամտություն, որն էլ հիմնարար փոփոխությունների գործներացում կարևորագույն հնատիտուտներից մեկն է<sup>40</sup>:

Չնայած հնատիտուտների հիմնարար դերին, քաղաքականությունը նույնպես անտեսել հնարավոր չէ: Նաև ակնհայտ է, որ նույնիսկ ամենաբարձրորակ հնատիտուտներն ավտոմատ կերպով լավ քաղաքականություն չեն երաշխավորում:

Անհրաժեշտ է կառուցողական կերպով օգտագործել և հնատիտուտները, և քաղաքականությունը: Այն երկրները, որոնց դա չի հաջողվել (ճիշտ է, դրանք շատ չեն), ուղևանպես շարունակել են իրենց զարգացումը: XXI դարի սկզբում մեկ շնչի հաշվով ԱՄ-ի մակարդակների լուրջ տարբերություններ են գրանցվում ինչպես ԵՄ շրջանակներում, այնպես էլ ԵՄ անդամ-երկրների և աշխարհի մյուս զարգացած երկրների միջև: Ներկայումն ԱՄ-ի ՀԱՀ-ը գերազանցում է ԵՄ-15-ի միջին ցուցանիշը ավելի քան 40%-ով: Օրինակ՝ Եթե Լեհաստանի մեկ շնչի հաշվով ՀԱՀ-ն կազմում է ԵՄ-15-ի միջին ցուցանիշի մոտ 38%-ը, ապա ԱՄ-ի համեմատ այն կազմում է 27%<sup>40</sup>:

Այսպիսով, հնարավոր և իրական աճի տեմպերի միջև խզումը պայմանավորված է ընտրված տնտեսական քաղաքականության երթություններով, ի տարբերություն այն քաղաքականության, որը կարող էր իրականացվել առկա կառուցվածքային, հնատիտուցիոնալ և մշակութային միջավայրում:

Այսինքն, ցանկացած կառուցվածքային, հնատիտուցիոնալ և մշակութային պայմանաթերում լավ տնտեսական քաղաքականության անցկացումը հնարավոր է, սակայն խնդիրն այս կամ այն երկրում կոնկրետ իրավիճակներում դրա անհանապատճանությունն է: Եթե նույնիսկ ինչ-որ քաղաքական հայեցակարգ իրականում «աշխատել» է գործնականում, օրինակ, Զիլիում, դա դեռ չի նշանակում, որ տեղական պայմաններում դրա կիրառման արդյունքները պետք է լինեն նույնքան հաջող: «Պատճառը գոյություն

<sup>37</sup> Г. Колодко, Политика и экономические процессы, “Вопросы экономики”, N7, 2004, стр. 37-38:

<sup>38</sup> Ա. Սարկսյան, Է. Սարկսյան, Սոցիալական հնատիտուտների դերը մարդկային կայիտալի գարգացման գործում, «Բարեբեր Հայաստան պետական տնտեսագիտական հանպարամի», Երևան, 2006, 3(9), էջ 32:

<sup>39</sup> J.Kornai, The Role of the State in a Post-socialist Economy. – Distinguished Lectures Series, 2001, No 6. Leon Kozminski Academy of Entrepreneurship and Management, Warsaw.

<sup>40</sup> [http://epp.eurostat.ec.europa.eu/statistics\\_explained/index.php?title=File:GDP\\_at\\_current\\_market\\_prices, 2001, 2010 and 2011.png&filetimestamp=20121204113534](http://epp.eurostat.ec.europa.eu/statistics_explained/index.php?title=File:GDP_at_current_market_prices, 2001, 2010 and 2011.png&filetimestamp=20121204113534)

ունեցող ինստիտուտների և առաջարկվող քաղաքական գործիքների անհամապատասխանությունն է: Քաղաքականությունը միշտ անհրաժեշտ է զմահատել՝ ելնելով կոնկրետ պայմաններից և միայն հաշվի առնելով արդյունավետությունը:

Ինչպես հետոցիալիստական երկրների նորագոյն պատմության, այնպես էլ անցյալ դրադի տնտեսական պատմության համեմատական ինստիտուցիոնալ վերլուծությունը ցույց է տալիս, որ զարգացումը չի կարող ապահովվել միայն կապիտալի (խայողություններ) ներհոսքով: Չի կարող ապահովվել նաև միայն գիտելիքների ու տեխնոլոգիայի ներմուծմամբ («զողությամբ»): Այս ամենը քիչ օգտակար է առանց արդյունավետ ինստիտուտների ներմուծման ու արմատավորման:

«Վատ» ինստիտուտների պայմաններում ներդրումային ծրագրերում նորամուծությունների չափը սահմանափակվում է: Վերնախավոն («Էլիտա») ունի օրենսդրութեան կամ այլ ձևերով ամրագրված մենաշնորհային իշխանություն և հակված է արգելափակելու զանկացած նորարարական փոփոխություն՝ վախենալով կորցնել իշխանությունը<sup>41</sup>:

Պետք է նշել նաև, որ, չնայած տնտեսական աճի հետազոտություններում առաջընթացին և ինստիտուտների դերի որոշման վերաբերյալ ծերքերումներին, ումիւրասալ ինստիտուցիոնալ «դեղատոնմ» կազմելը շատ բարդ է:

Անցյալ դարում փորձեր էին արվում զարգացած երկրների ինստիտուտները «տեղափոխել» զարգացող երկրներ, բայց դա հաջողվեց սահմանափակ թվով երկրների: Այսպես, Դ.Բերկովիչի և համահեղինակների աշխատության մեջ վերլուծվում էր իրավական համակարգի արդիականացման փորձը 39 երկրների համար: Դեղինակները գտնում են, որ բարեփոխումների արդյունքները բավարար են միայն 6 երկրներում<sup>42</sup> և նշում են, որ ինստիտուտների ներմուծման հաջողության հիմնական գործնըն ներմուծվող նորմերի հարմարեցումն է տեղական պայմաններին և պատմականորեն ձևավորված ավանդույթներին<sup>43</sup>:

Այսպիսով, ժամանակակից ինստիտուցիոնալ հետազոտությունները չեն առաջարկում (և նոտ ապագայում չեն կարող առաջարկել) ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման ունիվերսալ «դեղատոնմներ»: Ըստ էլերյան, շատ հարցեր միշտ էլ պահանջելու են տեղական պայմանների մանրակրտիտ ուսումնասիրություն:

Հետոցիալիստական երկրներում վերափոխումներ անցկացնելու արագության և տնտեսական աճի միջև հարաբերակցությունը քաղաքականության առարկա է: Որոշ տնտեսագետներ կողմնակից են վերափոխումների հնարավոր շտապ իրականացմանը, մյուսները քննադատում են այդպիսի ռազմավարությունը, որն իր հետ կարող է բերել ոչ պարտադիր բարձր ծախսեր: Այդ վիճաբանության ամենահետաքրքիր մասը վերաբերում է քաղաքական միջոցառումների հաջորդականության որոշմանը, որոնք վերաբերում են տարբեր տեսակի վերափոխումների արագությանը<sup>44</sup>:

Ներկայում ընդունված է այն փաստը, որ սոցիալիստական տնտեսությունների ձևավորման սկզբնական շրջանում ինստիտուցիոնալ գործուների դերը թերագնահատվում էր: Շուկայական տնտեսության անցնելու ավելի հայտնի մոտեցումները կարևոր նշանակություն էին տալիս տնտեսության ազատականացմանը, կայունությանը և մասնավորեցմանը: Այդ իսկ պատճառով բարեփոխումներից հետո տնտե-

<sup>41</sup>Ն.Մարտիրոսյան, Ինստիտուտներ, ժամանգություն և տնտեսական աճ, «Բանբեր Յայաստանի պետական տնտեսագիտական համապարանի», Երևան, 2011, 1(22), էջ 8:

<sup>42</sup>Այս երկրներն են՝ ճապոնիան, Խոսհիան, Շուանդիան, Խորաբելը, Արգենտինան և Չիլին:

<sup>43</sup>Berkowitz Daniel, Katharina Pistor, Jean-François Richard (2003) The Transplant Effect, The American Journal of Comparative Law, Vol. 51, No. 1.

<sup>44</sup>Ո.Ղավլյան, Ա.Մարկոսյան, Յ.Սարգսյան, Յամակարգային և ինստիտուցիոնալ վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., Տիգրան Մեծ, 2003, էջ 68:

սության դինամիկայի վերլուծության սկզբնական փուլում ուշադրություն էր դարձվում կառուցվածքային գործոններին (Ելակետային պայմաններ) և ազգային տնտեսական քաղաքականության առանձնահատկություններին (կառուցվածքային վերափոխումներ, կայունացում և ազատականացում) վերաբերող հարցերին: Աստեղախտականությունը քննարկվել են անցումային երկրներում աճի վերականգնան և խթանման վրա ինստիտուտների ազդեցությանը նվիրված բազմաթիվ աշխատանքներ:

Եթե 1990-ական թվականների երկրորդ կեսին շուկայական ինստիտուտների անրապնդումը դիտվում էր ավելի ներ շրջանակներում, ապա վերջին տարիներին շուկայական փոփոխությունների բարեհաջող հրականացումը բացատրվում է հիմնականում ինստիտուցիոնալ գործոններով: Աստեղախտականությունը դիտարկված գործեր բոլոր հետազոտություններում հեղինակներին հաջողվում է գտնել դրական կապ ազգային ինստիտուտների որակի և տնտեսական աճի միջև:

**Աստեղախտական երկրորդ՝ «Տնտեսական զարգացման ինստիտուցիոնալ բնութագրերը և ժողովրդավարության սոցիալ-տնտեսական հիմքերը համաշխարհային տնտեսությունում» գլխում վիճակագրական հետազոտության են ենթարկվել համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալ գործոնները, վերլուծվել են ժողովրդավարության, տնտեսական աճի և տնտեսական կայունության հիմնախնդիրները, ինչպես նաև իրավունքի նորմերի, ազատության և ժողովրդավարության սոցիալ-տնտեսական հիմքերը համաշխարհային տնտեսությունում:**

Համաշխարհային տնտեսության մեջ ինստիտուցիոնալ միջավայրի և ինստիտուցիոնալ բարեփոխումների ազդեցության գնահատման անհրաժեշտությունը հիմք է տալիս անդրադասնալ աշխարհի տարբեր երկրների (երկրների խմբի) համար կատարված հետազոտություններին և պատճական միջակայքերի գնահատման միջոցով պատկերացում կազմել համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալ հենքի վերաբերյալ:

Տնտեսական ազատության սկզբունքների հիմնավորումը հետևել է տնտեսական գործունեության զարգացմանը, դրանով իսկ դառնալով քաղաքական ազատության, այն է՝ ժողովրդավարության չպահանագրված և անսպասելի արդյունքը<sup>45</sup>:

Ավագան վկայում է, որ առանց ժողովրդավարական ինստիտուտների համակողմանի ուսումնասիրության և շուկայական տնտեսության մեջ դրանց դերի գնահատման հնարավոր չէ պատկերացնել Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ զարգացումն ու միջազգային նորունակության բարելավումը:

Այսպիսով՝ անհրաժեշտություն է առաջանալ ստուգելու այն հիպոթեզը, թե պատճականորեն երկար ժամանակաշրջանում (տվյալ դեպքում՝ 1820-2000թ.) ժողովրդավարական հասարակարգը (ավելի ճիշտ՝ իրավական ժողովրդավարությունը<sup>46</sup>) դրական վիճակագրական կապ ունի<sup>47</sup> արդյոք մեկ շնչի հաշվով ՀԱՀ-ի աճի տեսակերպի հետ:

Առանձնացվել են իրավական ժողովրդավարության հետևյալ տարրեր իրավակաները՝

- ա) իրավական ժողովրդավարական պետություն (RoL Democracy),
- բ) ժողովրդավարության տարրերով իրավական պետություն (RoL&DemElements),
- գ) իրավական պետության տարրերով ժողովրդավարական վարչակարգի հիմքեր (Dem\_basis&RoLElements),
- դ) ոչ ազատական ժողովրդավարություն (IIIibDemocracy):

Մերիսոնի կողմից ներկայացված մեծ թվով երկրների ու գործնականում բոլոր խոշոր տարածաշրջանների գօնվ առկա տվյալները թույլ են տալիս 145 երկրների

<sup>45</sup>Хайнц Фридрих Август фон, Дорога к рабству / Пер. с англ. М.: Новое издательство, 2005. с. 42 (Библиотека Фонда «Либеральная миссия»)

<sup>46</sup>В.Май, С.Жаворонков, К.Яновский и др., Импортированные институты в странах с переходной экономикой: эффективность и издержки. Научные труды. №68.М.: ИЭПП, 2003, 107 с.

համար առաջ քաշել նման գնահատական (տես այդուսակներ 1 և 2)<sup>47</sup>:

Աղյուսակ 1  
Ինստիտուցիոնալ զարգացման և տնտեսական աճի գնահատման փոխականները<sup>48</sup>

N	Փոփոխականի նշանակությունը	Փոփոխականի նկարագրությունը	
		1	2
1	GDPavgrowth	1820-2000 թթ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի միջին տեմպը	3
2	StartGDP	1820 թ. շրջանի սկզբին մեկ շնչի հաշվով Եկանուտը	
3	DemocrTaxp	Դարձածության ժողովորակարության տարիների քանակը (տողությունը)	
4	RoLDemocracy	Երկրում իրավական ժողովրդավարության վարչակարգի տարիների քանակը (տողությունը)։ Այս, Անգլիա 1832թ. հետո, Ֆրանսիա՝ 3-րդ համրապետությունը մինչև 1940թ. և այլն (կառավարությունը կարող է և դատարանում պարտվել և հեռանալ ընտրությունների արդյունքներով)	
5	RoL&DemElements	Ժողովրդավարության տարրերով իրավական պետությունը (Անգլիան մինչև 1832թ, Շոլանդիան՝ XVII-XVIII դարերում, Ֆրանսիան՝ Շուլսիան միապետության օրոք) հազվադեպ տեսակ է. իրավական պետությունում դատարանն անկախ է և կառավարությունը կարող է կորցնել իր «ենթօք» դատարանուն։ Տարրերը նշանակվում են կանոնավոր ընտրությունների առկայություն, նշանակալի իրավասություններով խորհրդարան (հարկեր, բյուջե), քաղաքական մրցակցություն, բայց ցանկացած հարկասոտ չէ, որ կարող է դառնալ ընտրող կամ ընտրողների ներկայացուցական անհավասարությունը տարրելովն է, որպես կանոն, 1 և ավելի կարգով	
6	Dem_basis&RoleElements	Իրավական պետության տարրերով ժողովրդավարական ռեժիմի հիմքերը (օրինակ՝ Ուսասատանը, Ուկրաինան, Յայաստանը, Ուսմինիան 1990-ական թվականներին, նման վարչակարգերի մեծամասնությունը հետամնաց երկրներում է, որտեղ գյուղելուն ունի մեկ տեսակ): Ժողովրդավարության ամենատարածված ձևն է զարգացած երկրներում։	
7	IllibDemocracy	Դամբնիհանուր ընտրական իրավունքով ժողովրդավարական վարչակարգի հիմքեր, որպես կանոն, Rol տարրերի բացակայության պարագայում (օրինակ՝ ներկայիս Վենետուելան, Աֆրիկայում ժողովրդավարության կարճատու օրինակները)	
8	Restrict Govt	Պետության (կառավարության) կանայական սահմանափակում՝ լինի դա օրենքով, թե դատարանով կամ քաղաքական մրցակցությամբ (տողություն՝ 5, 6, 7, 8 տարի)	
9	"Relig_Peace" (Not_ethnic_monotheism)	«Ոչ էրկական միակողություն», ավելի պարզ՝ «աշխարհի կրոն»՝ մահմեդականությունը որպես երկուում գերակշռող կրոն	
10	Judeo-protest	Ժողովրդավարության կայացման շրջանում բողոքական արժեքների գերակայությունը	

Սուբյեկտիվ գնահատականների նվազեցման նպատակով շատ թե քիչ ժողովրդավարական զարգացման շրջանը բաժանվել է չորս կատեգորիաների (5-8 փոփոխականները): Նման շրջանի ընդհանուր տողությունը (պետության սահմանափակ իշխանություն) օգտագործվել է նաև վիճակագրական վերլուծության համար և և տվել է նշանակալի արդյունքներ։

<sup>47</sup> M.Maddison, The World Economy Historical Statistics. Paris OECD, 2003.

<sup>48</sup> В.Мая, К.Яновский, С.Жаворонков, Д. Маслов, Институциональные предпосылки современного экономического роста – ИЭПП, 2007. с. 78.

Ինստիտուցիոնալ զարգացման և տնտեսական աճի տվյալների համադրության  
արդյունքները<sup>49</sup>

№	Բացատիվ կողմունական	Անկախ կողմունականուն	Գործադիր արժեքը անկախ կողմունականի նմանություն (մորմանկության)	Դիտարկումների քանակը	Տվյալներուն գործություն	R <sup>2</sup> -մորմանկության
1	2	3	4	5	6	7
1	GDPavgrowth	Democr&Rol	0,549	145	7,863	0,297
2	GDPavgrowth	RestrictGovt	0,582	145	8,567	0,335
3	GDPavgrowth	StartGDP	0,333	49	2,420	0,092
4	Democr&Rol	DemocrTaxp	0,869	145	20,970	0,753
5	Democr&Rol	StartGDP	0,808	49	9,412	0,646
6	GDPavgrowth	RoL Democracy; Relig_Peace	0,513 -0,162	145	7,213 -2,275	0,324
7	RoL Democracy	StartGDP Judeo- protest DemocrTaxp	0,289 0,308 0,392	145	4,763 5,199 5,615	0,761
8	RoL Democracy	"Relig_Peace" DemocrTaxp	-0,107 0,792	145	-2,131 15,779	0,671

Իրավական ժողովրդավարության վարչակարգի տևողությունը բացատրվում է մեկնարկային ՀՆԱ-ով, արժեքների և հարկատուի ժողովրդավարության առկայության, ինչպես նաև մահմերդականության՝ հարկատուի ժողովրդավարության (դրական) հետ գորգակցման ժամանակ գերակայությամբ (բացասական) (8-րդ կոռելացիա):

XX դարում ԳՏԱ արագացումը ազդել է աճի տեմպերի վրա (XIX դարում աճի 1% միջին տարեկան տեմպը միանգամայն գործադրության ցուցանիշ էր, մինչեւ XX դարի խաղաղ ժամանակահատվածներում աճի երկարաժամկետ տեմպերը կարող էին գերազանցել 3%-ը): Ժողովրդավարական ռեժիմի և այս կամ այն իրավական նորմերի՝ տնտեսական աճի համար կարևորությունը ցուցադրելու հնարավորությունները նվազեցնել ծայրասիհան կարևոր գործոն է նաև ներդրումների աղբյուրի պատճենական ազդեցությունը:

Մինչև XIX դարի վերջը զարգացած երկրներն առանց բացառության տարբերվում էին հետամնաց երկրներից իրավական պետության փորձի ու ժողովրդավարական ղեկավարման առկայությամբ: Հենց այդ երկրներն էլ, որոնք մեծամասնաբ բողոքական էին, մնացած աշխարհի համար դարձան լայն ինաստով ներդրումների արյուղ՝ ֆինանսականից մինչև գիտական ու մարդկային կապիտալ:

Հիմնարդ իրավունքի ինստիտուտները նշանակալիորեն կապված են երկարաժամկետ շրջանում տնտեսական աճի միջին տեմպերի հետ:

Ընդ որում, զարգացվածություն վաղ մակարդակներում՝ 1990թ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 2-3 հազար ԱՄՆ դոլարից էլ պակաս մակարդակում աճի տեմպերը կարող են

<sup>49</sup> В. May, К. Яновскиն, С. Жаворонков, Д.Маслов, Институциональные предпосылки современного экономического роста – ИЭПП, 2007. с. 79-80.

միանգամայն բարձր լինել ինստիտուցիանալ նախապայմանների նվազագույն հավաքածուի իրագործման դեպքում:

Ավտորիտար արդիականացման հաջողությունները հուսալի ձեռքբերումներ չեն համարվում (անգամ 1950-1990թթ.). բուռն աճի շրջանին հետևում է խորը և տևական անկումների շրջանները: Տնտեսության մեջ ավտորիտար վարչակարգերի հաջողությունները շատ ավելի զգայուն են քաղաքական ցնցումների նկատմամբ (իրավական ժողովրավարության հետ համեմատած, նման վարչակարգերի ավելի քիչ կայունության պատճառով):

Կռաջընթացն ավելի դանդաղ տեմպերով է տեղի ունենում ԱՊՀ երկրներում, որտեղ երկար տարիների ընթացքում գոյություն է ունեցել արտակարգ ուժեղ պետական վերահսկողություն կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ և որոնք հնարավորություն չեն ունեցել շուկայի կամ քաղաքակիրք հասարակության նկավորնան համար:

Պետության սոցիալական տիպը, որը ստեղծվել էր ԽՍՀՄ-ում, կառուցվել էր մի քաղաքական հոսանք՝ մարքս-լենինյան գաղափարախոսության հենքի վրա, որի տնտեսական համակարգը արտադրության միջոցների պետական անարդյունավետ սեփականությունն էր, պետական կառավարման գինանոցում գերակշռում էին վարչական մեթոդները, խիստ սահմանափակ էր տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ազատությունը, համակարգում բացակայում էր զարգացման բնական շարժիքը ուժը՝ նոցակցությունը: Նման քաղաքական ու տնտեսական համակարգը կամ պետք էր էականորեն բարեփոխել, կամ օրինաչափորեն փոխարինվեր առավել առաջադիմական քաղաքական և տնտեսական համակարգով ու դրան համապատասխան՝ պետական կառավարման մեխանիզմով, ինչը տեղի ունեցավ 1991 թվականի<sup>50</sup>:

Անցումը շուկայական տնտեսությանը Դայաստանում իրագործվեց ազատականացման ուղղությունում վերաբերյալ մոտ և հեռու արտասահմանի հանձնարարականների պարզունակ տեղայնացման և(կամ) զուտ քաղաքական նպատակներ հետապնդող մոտեցումների ներդրման միջոցով: Դավուր պատշաճ զգնահատվեցին մեկնարկային տնտեսական իրողությունները, կառավարման և կառուցվածքային նկավորումների ասարհեղում դրսուրվեցին անիրազեկություն և ծայրահեղականություն, որոնք չէի կարող չնպաստել հանրապետության տնտեսության փլուզմանը<sup>51</sup>:

Անցումային շրջանում, եթե շուկայական տնտեսության և իրավական պետության շուկայական հնատիտուտները և հաստկապես օրենքներն ու դրանց գործադրման մեխանիզմները դեռևս կայացման փուլում են, խիստ նեծանում է հավանականությունը, որ կոռուպցիոն հարաբերությունները շատ դեպքերում կլիմեն ավելի ճախճնտրելի, քան օրինական ճանապարհները<sup>52</sup>:

Որպեսզի ժողովրավարությունը չվերածվի բռնապետության, նոր ժողովրավարական, այդ թվում՝ հետխորհրդային երկրները հուսալի սահմանադրության կարիք ունեն, որը հիմնված է շուկայական ազատական սլաքունքների վրա:

Ընդհանուր առմանք, կարելի է նշել երկրում ժողովրավարության առկայության սկզբունքուն կարևոր երկու չափանիշներ:

- քաղաքական գործիչների սերունդ, որոնք պատրաստ են զիջել իշխանությունը և որոնց համար իշխանությունն ինքնանպատակ չէ,

<sup>50</sup>Յու.Սովարյան, Դայաստանում հանրային կառավարման տեսության և պատմության ուրվագծեր, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական հնատիտուտի», Երևան, 2004, 1, էջ28-29:

<sup>51</sup>Ռ.Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Դայաստանում. պետության դերը, ՕԱՀՀԿ, Երևան, 2001, էջ15-16:

<sup>52</sup>Ա.Սարգսյան, Տնտեսական համակարգի բարեփոխումները սիմերգետիկ մեթոդաբանության համատեքստում, «Բանբեր Դայաստանի պետական տնտեսագիտական համասարանի», Երևան, 2008, 1(13), էջ12:

- քաղաքական համակարգի առկայություն, որն ունակ է վերարտադրել ազգային ժողովրդավարական առաջնորդների<sup>53</sup>:

Դժբախտաբար, հետխորհրդային երկրիների մեծ մասում նշված երկու ինստիտուտները բացակայում են:

Հայաստանում իշխանության եկած թիմն ունի շարժման երեք հնարավոր ծանապարհ: Առաջին, որն ամենանախընտրելին է, ազատական ժողովրդավարական համակարգի ստեղծում՝ իշխանությունների բաժանմամբ և ազատ շուկայով: Սա այն է, որը հռչակվել է և իրականում չի իրականացվել:

Երկրորդ մոդելի ժամանակ ստեղծվում է ավտորիտար շուկայական համակարգ, որի դեպքում զոհաբերվում են ժողովրդավարությունը և ժողովրդավարական արժեքները, իսկ առաջին պլան են մղվում ազատականության և շուկայական տնտեսության գաղափարները (կիրապում է մի շարք երկրներում):

Եվ վերջապես երրորդը վարչական-պետական կապիտալիզմի ստեղծումն է՝ իիմնված ուժային մեթոդների վրա:

Դժբախտաբար, մեր ընտրությունն այսօր ընկած է երկրորդ և երրորդ մոդելների միջև և իրերի բարենպաստ դասավորության դեպքում հնարավոր կլիմի ընտրել երկրորդ մոդելը:

Դրա հետ մեկտեղ, այս խնդիրը բարեփոխչների համար գործունեության լայն դաշտ է ստեղծում ինստիտուցիոնալ վերափոխումների և ազատական տնտեսության ստեղծման համար:

**Ամենախոսության երրորդ՝ «Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի ընթացիկ վիճակի գնահատումը համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում» գլուխը Նվիրված է միջազգային ցուցիչների միջոցով Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման մակարդակի գնահատմանը, համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցուցանիշների փոխադարձ կապին, ինչպես նաև արված են որոշ եզրակացություններ Հայաստանի ժամանակակից ինստիտուցիոնալ զարգացման վերաբերյալ:**

Համաշխարհային տնտեսության զարգացմանն ուղեկցող երկարաժամկետ միտումները դրսորվում են տնտեսության միջազգայնացման գործընթացում: Միջազգայնացումը ոչ միայն տնտեսական երևույթ է, այլև ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ ներառյալ ինստիտուցիոնալ միջավայրը<sup>54</sup>:

Հեղինակը միջազգային ցուցանիշների միջոցով համենատական վերլուծության է ենթարկել Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացման միտումները 1996-2011թթ. ժամանակահատվածի համար: Աշխատանքում հիմնականում օգտագործվում են Համաշխարհային բանկի՝ պետական կառավարման որակի (World Bank Worldwide Governance Indicators) և Transparency International-ի՝ կոռուպցիայի ընկալման (TI CPI) ինդեքսները, որոնք անհրաժեշտ են Հայաստանի և այլ երկրների ինստիտուցիոնալ դինամիկայի վերլուծության համար:

WGI ինդեքսներն ընդգրկում են պետական կառավարման 6 իմնական ուղղություններ (214 երկրում) և արտահայտվում են հետևյալ 6 ամբողջական ցուցանիշներով.


<sup>53</sup> А. Дарбնян, Демократия и свободный рынок: оспариваемая первичность в практике переходного периода, Материалы международной конференции «Переходные экономики в постиндустриальном мире: вызовы десятилетия» 20-21 марта 2006, <http://www.iiep.ru/ru/demokratiya-i-svobodnyi-rynek-osparivayemaya-pervichnost-v-praktike-pere-odnogo-perioda-2.html>

<sup>54</sup> Ա.Ասրկովյան, Գ.Նազարյան, Դ.Հախվերդյան, Սիհազային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ծեռնարկ երկու մասով/ Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան; Սամ. Խմբ.: Ասում Վարդամյան. - Եր.: ԵԵԾՊՀ, 2012. Մաս 1. էջ 99:

1. պետական կառավարման նարմինների արդյունավետությունը (government effectiveness),
2. կարգավորող ինստիտուտների որակը (regulatory quality),
3. իրավական ինստիտուտների որակը (rule of law),
4. հակակլոռուացիոն վերահսկողությունը (control of corruption),
5. քաղաքացիների իրավունքները և պետական նարմինների հաշվետու լինելը (voice and accountability),
6. քաղաքական կայունությունը և բռնության/ահարեկչության բացակայությունը (political stability and absence of violence)<sup>55</sup>.

Պետական կառավարման նարմինների արդյունավետության ցուցանիշի գծով 2011թ. առաջատար էին Ֆինլանդիան (2.25), Դանիան (2.17), Սինգապուրը (2.16) և Շվեյցարիան (1.96): Յայաստանը գտնվում էր 104-րդ տեղում (-0.09): Ընդհանուր առմանք, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Յայաստանում գրանցվել է ինդեքսի ընչին աճ: Ընդ որում, 2000թ. ինդեքսը նվազել է՝ կազմելով -0.57: Ենտագայում, սկսած 2002թ., նկատվում էր ցուցանիշի անկայուն աճի միտում: 2009թ. ցուցանիշը հասավ առավելագույն կետին՝ 0.00, սակայն 2010-2011թթ. այդ միտումը սկսեց փոխվել:

Ընդհանուր առմանք, գծապատկեր 1-ում պատկերված երկրների համեմատ Յայաստանի ինդեքսը ցածր է, որը վկայում է պետական կառավարման ոչ բավարար արդյունավետության մասին: Պետք է նշել, որ ընտրված երկրների խմբում բացասական արժեքներ ունեն միայն ԱՊԴ և Լատինական Ամերիկայի որոշ երկրների ինդեքսները, ընդ որում, Յայաստանը գերազանցում է միայն Ադրբեյջանին, Ուստանին, Ուկրաինային, Բելառուսին և Ղազախստանին:




Գծապատկեր 1. Յայաստանի պետական կառավարման նարմինների արդյունավետության ինդեքսը երկրների իմանական խմբի համեմատությամբ

Կարգավորող ինստիտուտների որակով 2011թ. ամենաբարձր ցուցանիշներն ունեին Դանիան (1.93), Նոր Զելանդիան (1.91) և Շվեյցարիա (1.88): Յայաստանը 91-րդ տեղում էր 214 երկրների շարքում (0.26): Դա բավականին ցածր ցուցանիշ է Արևելյան Եվրոպայի երկրների համեմատ: Ուսումնասիրվող ժամանակահատվածի վերջում Յայաստանի ցուցանիշը մեծ էր ԱՊԴ երկրների համանան ցուցանիշներից,

<sup>55</sup>WGI բոլոր ինդեքսները գտնվում են -2.5-ից 2.5 միջակայքում, ըստ որում, որքան մեծ է ինդեքսի արժեքը, այնքան պետական կառավարման որակը բարձր է: Քաղաքացիների իրավունքների և պետական նարմինների՝ հաշվետու լինելու, ինչպես նաև քաղաքական կայունությունը և բռնության/ահարեկչության բացակայությունը բնորոշող ինդեքսների միջերկրային հետազոտությունը բերված է ատենախոսությունում:

փոքր՝ Վրաստանից, և կաստորեն, ավելի ցածր էր մնացած Երկրների համեմատ: Պետք է նշել, որ ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի Երկրներից Ուսասատանում, Ռէկրախնայում և Ղազախստանում նկատվել է ցուցանիշի անկուռ, ընդ որում, ամենամեծ անկուռն ունենաւ Ռէկրախնան: Բուլղարիայում, հակառակը, նկատվել է ինդեքսի աճ, որը 1996-2011թ. կազմել է շուրջ 0.7 միավոր: Հայաստանում ինդեքսն ունի անկայուն աճի միտում, որն առավելագույնի հասավ 2010թ. (0.3): Ընդհանուր առնամբ, 1996թ. համեմատ Հայաստանի ցուցանիշն աճել է շուրջ 0.6-ով (տե՛ս գծապատճեր 2):




Գծապատճեր 2. Հայաստանի կարգավորող ինստիտուտների որակի ինդեքսը Երկրների հիմնական խմբի համեմատությամբ, 2011թ.

Համեմատելով Երկրների հիմնական խմբի հետ՝ կարելի է նշել, որ Հայաստանում կառավարման որակը զգալիորեն զիջում է Բալթյան Երկրների կառավարման որակին, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի Երկրներին:

Երավական ինստիտուտների որակի ցուցանիշը 2011թ. առաջատարներ էին Ֆինլանդիան (1.96), Ծվեդիան (1.95), Ղանիան (1.92): Հայաստանը գրավլում էր 121-րդ տեղը (-0.41), որը միշտ ցուցանիշ է ուսումնասիրվող անցումային տնտեսությամբ Երկրների շարքում: Ուսումնասիրվող ժամանակահատվածի ամրոց ընթացում Հայաստանն առաջ էր ԱՊՀ Երկրների մեծ նաև զարգացած գործությունների մեջ նաև զիջում, որը կառավարման (-0.16), սակայն դիտարկվող ժամանակաշրջանում այդ ցուցանիշն, ըստ էության, չի փոխվել (-0.49-ից մինչև -0.41): ԱՊՀ Երկրներից առավելագույն առաջընթացն ապահովել է Ղազախստանը (մոտ 0.6 միավոր), իսկ վատագույն ցուցանիշը պատկանում է Բելառուսին (-1.08):


Գծապատճեր 3-ից երևում է, որ իրավական ինստիտուտների որակի ցուցանիշը Հայաստանն առաջ է միայն ԱՊՀ Երկրներից և նշանակալիորեն զիջում է Երկրների մեծ մասին:

Հակակոռուպացիոն վերահսկողությունը 2011թ. ամենաարդյունավետն իրականացվել է Ղանիայում (2.42), Նոր Զելանդիայում (2.33) և Ծվեդիայում (2.22): Հայաստանը գտնվում էր 143-րդ տեղում 214 Երկրների շարքում (-0.58): Հատկացական է, որ դիտարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ցուցանիշը նվազել է 0.11 միավորով: Ընդ որում, հետխորհրդային Երկրներից (բացառությամբ Բալթյան Երկրների) Հայաստանը զիջում է միայն Վրաստանին (2011թ.՝ -0.02), սակայն մյուս ցուցանիշների աճի համատեքստում հակառակություն վերահսկողության ցուցանիշի վատրարացումը խոսում է ոչ ներդաշնակ ինստիտուցիոնալ բարեփոխումների մասին: Վրաստանում այս ցուցանիշը թոշքածն աճ է ապահովել (-1.39-ից մինչև -0.02), իսկ մյուս Երկրներում այն հիմնականում կայուն էր 1996-2011թթ. ընթացքում, Ուսասատանի ինդեքսն աճել է 0.082-ով:



Գծապատկեր 3. Հայաստանի իրավական ինստիտուտների որակի ինդեքսը երկրների հիմնական խմբի համեմատությամբ 2011թ.

Եթե 2011թ. Հայաստանը համեմատենք Երկրների հիմնական խմբի հետ, ապա կունենանք նույն պատճենը, որը ստացվել է իրավական ինստիտուտների որակի ցուցանիշի վերլուծության ժամանակ, որը վկայում է այս երկու ինստիտուցիոնալ բնութագրիչների միջև սերտ կապի մասին (տե՛ս գծապատկեր 4):




Գծապատկեր 4. Հայաստանի հակակռուացիոն վերահսկողության ինդեքսը երկրների հիմնական խմբի համեմատությամբ 2011թ.

Կռոռուացիայի ընկալման ցուցանիշի (Transparency International)<sup>56</sup> 2011թ. տվյալներից ելնելով (տե՛ս գծապատկեր 5)՝ կարելի է ասել, որ պատասխանատություն գնահատած կռոռուացիայի մակարդակի և Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միջև գոյություն ունի հակադարձ կապ: Այդ Երկրների վարկանիշը 2-3 է, մինչդեռ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Երկրների (բացի Մակեդոնիայից) վարկանիշը 4-ից բարձր է: Լատինական Ամերիկայի Երկրների վարկանիշը կազմում է 3-3.5, իսկ զարգացած Երկրների վարկանիշը 7-ից բարձր է:

Եթե վերլուծները իրավիճակի զարգացման դինամիկան, ապա կարելի է ասել, որ Հայաստանում կռոռուացիայի վերաբերյալ պատկերացումները բավականին հստակ են: 1999-2008թթ. կայուն տնտեսական աճը ոչ մի կերպ չի բարելավել իրավիճակը կռոռուացիայի ոլորտում: Ավելին, 2004-2007թթ. նկատվում էր իրավիճակի վատրառացում և եկամուտների եական աճը ոչ մի կերպ չէր կրամտել կռոռուացիայի մակարդակը:

<sup>56</sup>Ինդեքսի արժեքը տատանվում է 0-10 միջակայքում:Տե՛ս <http://www.transparency.org>:



Գծապատկեր 5. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը երկրների հիմնական խմբի համամատությամբ, 2011թ.

Հայաստանում ինստիտուցիոնալ և տնտեսական զարգացման միջև խզումը ժամանակի ընթացքում մեծանում է: Transparency International -ի կոռուպցիայի ինդեքսը ցույց է տալիս, որ 1996թ. Հայաստանում Եկամուտների մակարդակն ավելի շատ էր համապատասխանում ինստիտուցիոնալ զարգացման մակարդակին, քան 2011թ., եղու Եկամուտներն եականորեն աճել են, իսկ ինստիտուտների որակը գրեթե չէր փոփոխվել, որի հետևանքով խզումը մեծացավ:

Օգտագործելով Համաշխարհային WGI հաշվետվության տվյալները<sup>57</sup>, խնչես նաև Ե.Գյայդարի անվան տնտեսական քաղաքականության ինստիտուտի (նախկինում՝ Անցումային տնտեսության ինստիտուտի) հետազոտությամբ<sup>58</sup> ստացված ռեգրեսիայի արդյունքները, կարելի է եղրակացնել, որ բացառությամբ կարգավորող ինստիտուտների որակի ցուցանիշի, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճին (մինչև 4000 ԱՄՆ դոլար) համապատասխանում է ավելի բարձր ինստիտուցիոնալ միջավայր (քան գոյություն ունի իրականում) ըստ հետևյալ ցուցանիշների.

- պետական կառավարման մարմինների արդյունավետության ցուցանիշ, որն առնվազն պետք է կազմի 0.09 (Թայլանդի, Սոնմեննեգրոյի, Պանամայի ցուցանիշն է), մինչդեռ Հայաստանի ցուցանիշը -0.08 է,
- կարգավորող ինստիտուտների որակի ցուցանիշը պետք է կազմի 0.18 (Բրազիլայի ցուցանիշն է), Հայաստանի ցուցանիշը կազմում է 0.26,
- իրավական ինստիտուտների որակի ցուցանիշը պետք է կազմի 0.09 (Հարավաֆրիկյան Հանրապետության, Գրենադայի, Թուրքիայի ցուցանիշն է), ինչ ցուցանիշի ընթացիկ արժեքը -0.4 է,
- հակակոռուպցիոն վերահսկողության արդյունավետության ցուցանիշը. պետք է կազմի 0.08 (Թուրքիայի, Օմանի, Քուվեյթի մակարդակ), իսկ ինչ ցուցանիշի ընթացիկ արժեքն է -0.58:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և ինստիտուտների զարգացման մակարդակի միջև օճանաւիկ հարաբերակցությունը դեռ չի ապացուվում, որ Հայաստանում չի կարող տնտեսական աճը շարունակվել: Սակայն այդպիսի հարաբերակցությունը պատկերավոր ապացույցն է այն փաստի, որ ավանդական մողելմերի շրջանակներում Եկամուտների աճի և ինստիտուտների որակի միջև խզման ավելացում, որպես կանոն չի մկատվում: Այդպիսի խզման դեպքում կայուն տնտեսական զարգացումը

<sup>57</sup>The Worldwide Governance Indicators, 2012 Update, Aggregate Indicators of Governance 1996-2011, [www.govindicators.org](http://www.govindicators.org)

<sup>58</sup>Տե՛ս, մասնավորապես, Աналіз інституціональної динаміки в країнах з переходною економікою /Л.М. Фрейнкман, В.В. Даշкесов, М.Р. Муфтаятдинова – М.: ІЭПП, 2009. с. 61-75.: ил. – (Научные труды / Института экономики переходного периода; №126).–ISBN 978-5-93255-273-5.

վիճակագրորեն քիչ է հավանական, հատկապես ավանդական տնտեսական մոդելների շրջանակներում:

Ասենայիսության չորրորդ՝ «ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի տնտեսամաթեմատիկական գնահատականը» գլխում վերլուծվել է ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ խզումը համաշխարհային տնտեսական զարգացման համատեքստում, ՀՀ համեմատական ինստիտուցիոնալ զարգացման դինամիկան հետազոտվել է նորիֆիկացված գրավիտացիոն մոդելի կիրառմաբ, ինչպես նաև գնահատվել են Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման հնարավորությունները 1996-2011 թթ. ժամանակաշրջանի համար:

Տնտեսության և ինստիտուտների զարգացումը պահանջում է այդ գործընթացների ներդաշնակ ընթացք՝ չխցընդոտելով մեկի կամ մյուսի արդյունավետությունը: Այս տեսանկյունից, անհրաժեշտություն է առաջանում պարզեցնելու ՀՀ-ում տնտեսական ինստիտուտների և տնտեսական զարգացման համաշխափորյունը՝ միջերկրային համատեքստում:

Ազգային ինստիտուտների որակական տարրերությունների չափման համար հեղինակը ներմուծում է երկու երկրների միջև «ինստիտուցիոնալ խզում» հասկացությունը: Ինստիտուցիոնալ խզումը և և յ երկրների միջև ( $InstDist_{ij}$ ) սահմանվում է որպես տարրածության մեջ  $WBWGI$  պետական կառավարման որակի ինդեքսների կետերի միջև հեռավորություն<sup>59</sup> (1): Այս ինդեքսների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ, ի տարրերություն այլընտրանքային ցուցիչների, դրանց բնորոշ է ընտրանքի ծավալի լավագույն համադրություններից մեջը (այդ թվում՝ ըստ ներկայացված անցումային տնտեսությունների) և ժամանակի մեջ ծավածությունը:

$$InstDist_{ij} = \sqrt{\sum_{n=1}^N (Inst_i, n - Inst_j, n)^2} \quad (1)$$

որտեղ՝  $Inst_i, n$  – և երկրի համար ո $WGI$  ինդեքսի մեծությունն է, որտեղ  $n=1.....4$  (կամ 6):  $InstDist_{ij}$  – և յ երկրների միջև ինստիտուցիոնալ խզումն է:


Հետազոտության մեջ դիտարկվում է ինստիտուցիոնալ խզման գնահատման երկու տարրերակ՝ կախված օգտագործված  $WBWGI$  ինդեքսների քանակից: Առաջին տարրերակը իմանվում է 4 ինդեքսների վրա ( $N=4$ ) և ներառում է հետևյալ բաղկացուցիչները. 1) պետական կառավարման մարմինների արդյունավետությունը, 2) կարգավորող ինստիտուտների որակը, 3) իրավական ինստիտուտների որակը, 4) հակակոռուպացիոն վերահսկողությունը: Երկրորդ տարրերակում օգտագործված են  $WGI$ -ում ներառված բոլոր 6 ինդեքսները ( $N=6$ ): ի լրումն 4 սկզբնական ինդեքսների, ավելացված են. 5) բաղաքացիների իրավունքը և պետական մարմինների հաշվետու լինելը, 6) բաղաքական համակարգի կայունությունը և բռնության բացակայությունը:

Ինստիտուցիոնալ խզման՝ հեղինակի գնահատականները կառուցվել են այն երկրների համար, որոնց մոտ չկան բացքողումներ  $WGI$ -ում ներառված 4 կամ 6 ինդեքսներում: Քաղաքական բաղկացուցիչների գծով առկա են ավելի մեծ թվով բացքողումներ, որի արդյունքում 4 բաղկացուցիչով տարրերակը ներկայացված է ուսումնասիրությունների որոշակիորեն մեծ քանակով, քան՝ 6 բաղկացուցիչով: Ուսումնասիրությունների ավելացումը բոլոր է տալիս բարելավել վիճակագրական գնահատականների որակը:

Քանի որ տնտեսական ինստիտուտների զարգացման գնահատականները փաստում են, որ Ֆինլանդիան դիտարկվող 1996-2011թթ. համբաւացել է հիմնական առաջատար երկիրը, ապա վերոնշյալ հիմնախնդրի բնարկումը կիրականացվի

<sup>59</sup>Kaufmann Daniel, Aart Kraay, Massimo Mastruzzi (2007) "Governance Matters VI: Governance Indicators for 1996-2006". World Bank Policy Research Working Paper 4280.

տարբեր երկրների՝ ֆինլանդիայի նկատմամբ ունեցած ինստիտուցիոնալ խզման (WG14 և WG16 ինդեքսներով) և համապատասխան տնտեսական զարգացման խզման համատեքստում: Այսպես, 1996-2011թթ. ինստիտուցիոնալ խզման WG14 ինդեքսի միջին գնահատականներով Հայաստանը զգալիորեն զիջում է դիտարկվող 48 երկրների միջին ցուցանիշին, թեև ԱՊՀ տարածաշրջանի երկրների շարքում առաջատարների թվում է (տես գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Տնտեսական և ինստիտուցիոնալ խզում (4 բաղադրիչներով WG14 ինդեքս), 1996–2011թթ. (միջին)

Անդրադառնալով տնտեսական զարգացման և ինստիտուցիոնալ խզման համար դրությանը (տես գծապատկեր 6), պետք է փաստել, որ Հայաստանը 1996–2011թթ. միջին ցուցանիշներով գտնվում է տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման համաշափության առանցքից ներքև, ինչը վկայում է ինստիտուցիոնալ ավելի ցածր խզում՝ տնտեսական խզման համեմատությամբ. ասել է, թե՝ ինստիտուտների զարգացումն առաջ է ընկել տնտեսական առաջընթացից: Համեմատության համար նշենք, որ ինստիտուցիոնալ խզման գրեթե համարելի ցուցանիշներ ունեցող Չինաստանը, Արգենտինան և Թուրքիան բնուրագրվում են ավելի ցածր տնտեսական խզման գնահատականներով, մինչդեռ, նույն ինստիտուցիոնալ բնուրագրով երկրներից Հայաստանը տնտեսապես անենակեռացվածն է առաջատար Ֆինլանդիայից: Պետք է փաստել, որ 6 բաղադրիչներով ինստիտուցիոնալ խզման ինդեքսի վերլուծությունը ևս ապահովում են լիովին համարելի արդյունքներ:

Անդրադառնալով ժամանակի մեջ Հայաստանի հարաբերական դիրքի փոփոխությանը, հարկ է նշել, որ 1996–2011թթ. Հայաստանում սովորաբար դիտարկվել է առավել բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայր՝ տնտեսական զարգացման հետ համեմատության մեջ: Մինչդեռ, օրինակ՝ Վրաստանը, եթե 1996թ. բնուրագրվում էր ավելի մեծ ինստիտուցիոնալ խզմանը, ապա արդեն 2011թ. ցուցանիշներով տնտեսության զարգացումը հետ էր մնում տնտեսական ինստիտուտների առաջընթացից:

Համաշխարհային տնտեսության հնարավոր զարգացումների բացատրությունը պահանջում է նոր մոտեցումներ, որպեսզի հաշվի առնվեն երկրների առանձնահատկությունները, դրանցից բխող օրինաշափություններն ու կախվածությունները: Սասանակորապես, հաշվի առնելով արտաքին առևտուրի զգայունությունը՝ կարելի է ենթադրել, որ այդ կապի բացահայտումն օգտակար կլինի ոչ միայն տնտեսության ու-

սումնասիրության համար, այլև քաղաքական իրադարձությունների անդրադարձեցի տեսակետից<sup>60</sup>:

Տվյալ դեպքում երկրների միջև ինստիտուցիոնալ տարբերությունների բացահայտման փորձ է արված արտաքին առևտության գրավիտացիոն մոդելի օգնությամբ: Մոդելը բացի ՀՆԱ-ի միջերկրային տարբերություններից լրացուցիչ հաշվի է առնում նաև ինստիտուցիոնալ դինամիկայի մի շարք նշանակալի գործոններ:

Գրավիտացիոն մոդելը առաջին անգամ կիրավել է արտաքին առևտության հետազոտման համար՝ Յ. Թինբերգենի<sup>61</sup> կողմից: Մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելի ֆունկցիոնալ ձևը (2) բերված է ստորև.

$$F_{ij} = G^*(M_i/M_j)/Dist_{ij}, \quad (2)$$

որտեղ՝  $F_{ij}$ -ն՝ արտաքին տեսական հոսքերն են, օրինակ, և և յ երկրների արտահանման և ներմուծման գումարն է,  $M_j$ -ն՝ տնտեսական զանգվածներն են, օրինակ, և և յ երկրների ՀՆԱ-ն,  $Dist_{ij}$ -ն՝ և և յ երկրների միջև աշխարհագրական հեռավորությունն է,  $G^*$ -ն՝ գրավիտացիոն հաստատունն է:

Եթինական առաջարկում է օգտագործել գրավիտացիոն մոդելը ոչ թե գործընկեր երկրների արտաքին առևտության գարգարացման վերլուծության, այլ դրանց ինստիտուցիոնալ զարգացման տարբերությունների հետազոտության համար: Ենթադրվում է, որ հիմնական տնտեսական ինստիտուտների որակի միջաբետական տարբերություններն անմիջականորեն կապված են այնպիսի բազային պատճառաշխարհագրական գործոնի հետ, ինչպիսին է պետությունների միջև հեռավորությունը:

Գրավիտացիոն մոդելի ընտրությունը հենց բացատրվում է նրանով, որ փոխադարձ առևտության զարգացումը նպաստում է առևտության գործընկեր երկրներում ինստիտուտների մերձեցմանը: Այդ պատճառով, երկրների միջև առևտության գարգարացման մակարդակների տարբերությունները բացատրող գործոնները կարող են օգնել նաև հիմնական տնտեսական ինստիտուտների որակի գծով գրանցվող տարբերությունների բացատրմանը:

Այդպիսով, ինստիտուցիոնալ զարգացման միջաբետական տարբերությունները մոդելում բացատրվում են հետևյալ կետերի օգնությամբ՝

- երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարբերություններով, օրինակ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով,
- երկրների միջև աշխարհագրական հեռավորությամբ,
- միջաբետական առևտության տարբերությունները բնութագրող փոփոխականներով: Վերջիններս հաշվի են առնվազմ առևտության բացության ցուցանիշների տարբերությունների միջոցով (արտաքին առևտության բազային հարաբերությունը ՀՆԱ-ի):

Գրավիտացիոն մոդելի մոդիֆիկացված տարբերակը, որը հիմք կիմքիսանա հետագա վերլուծությունների համար, ներկայացվում է հետևյալ տեսքով.

$$InstDist_{ij} = \log(GDPc_i/GDPc_j) + \log(Dist_{ij}) + tradeopen_{ij} \quad (3)$$

որտեղ՝

$\log(GDPc_i/GDPc_j)$  - ն և և յ երկրների միջև գնողունակության համարժեքով հաշվարկած մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների հարաբերությունն է: Բոլոր հարաբերությունների համարիշում հանադրելի տվյալների ստացումն ավելի կարևոր է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի առավել մեծ արժեքը ունեցող երկրի համար, քան դիտարկվող և և յ երկրներից երկրորդի համար: Փոփոխականը ներ-

<sup>60</sup> Յ. Թինբերյան, Լ. Հարությունյան, Քաղաքական գործոնների ազդեցությունը անցումային երկրների տնտեսական ցուցանիշների վրա, «Քանի երկր երկանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», Երևան, 2005, 2(5), էջ 28:

<sup>61</sup> Tinbergen Jan (1962) Shaping the World Economy: Suggestions for an International Economic Policy, Twentieth Century Fund

կայացված է լոգարիթմական բացարձակ արժեքով:  $\log(\text{Dist}_{ij})$  - Ա՛ և և յ երկրների միջև աշխարհագրական հեռավորությունն է՝ լոգարիթմական տեսքով<sup>62</sup>: *trade openij* – Շ' արտաքին առևտորային բացության (արտաքին առևտորաշրջանառության հարաբերությունը ՀՆԱ-ին) տարբերությունների մեծություններն են և յ երկրների միջև:

Այսպիսով, վերոնշյալ տեսքի գրավիտացիոն մոդելը կօգտագործվի հետևյալ հիպոթեզների ստուգման և քննարկման համար.

- ՀՀ ինստիտուցիոնալ խզման բացատրությունը պայմանավորող գործոնների (տնտեսական զարգացվածություն, աշխարհագրական հեռավորություն, արտաքին առևտորի բացվածություն) և դրանց հարաբերական դերակատարության բացահայտում,
- առաջատար ինստիտուտներ ունեցող երկրներից (տվյալ դեպքում՝ Ֆինլանդիայից) ՀՀ և այլ երկրների տնտեսական ինստիտուտների հեռացվածության գործոնային բացատրություն,
- գնահատել երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, ինստիտուցիոնալ միջավայրի փաստացի իրավիճակի հանապատասխանությունը դրա զարգացման օբյեկտիվ պայմաններին և հնարավորություններին:

ՀՀ ինստիտուցիոնալ խզումը բացատրելու համար գնահատվել է գրավիտացիոն մոդելի օրինակ, Հայաստանի՝ 48 երկրների հանապատասխան ցուցանիշներից շեղումների տվյալներով: Գնահատվել են մոդելի 4 իմմանական հասուկացումներ՝ 4 և 6 քաղաքիչներով ինստիտուցիոնալ խզման ինդեքսներով՝ ներառյալ հանապատասխան միջահատվածային (cross-section) տարբերակները (տե՛ս աղյուսակ 3):

Ընդհանուր առմամբ, գնահատման արդյունքները վկայում են կառուցված մոդելների բավականին բարձր բացատրող հատկություններով. բոլոր մոդելներում ծզգրտված  $R^2$  գործակիցը գտնվում է 0.65-0.72-ի շրջանակներում: Միևնույն ժամանակ, գնահատականների կայունության մասին են վկայում նաև վերոնշյալ 4 տարբեր հասուկացումներով՝ տարբերակների գնահատման գործեք համարելի արդյունքները: Այս ամենը փաստում է այն մասին, որ ներկայացված գրավիտացիոն մոդելը կարող է կիրառվել ՀՀ ինստիտուցիոնալ խզման բացատրության գործում, ընայած չփառարկված այլ գործոնների առկայության փաստին:

Առաջատար ինստիտուտներ ունեցող երկրներից (տվյալ դեպքում՝ Ֆինլանդիայից) ՀՀ տնտեսական ինստիտուտների հեռացվածության գործոնային բացատրության մպատակով ևս կիրառվել են գրավիտացիոն մոդելի 4 տարբեր հասուկացումներ (տե՛ս աղյուսակ 4):

Կառուցված մոդելները հանդես են գալիս բավականին բարձր բացատրող հատկություններով՝ ծզգրտված  $R^2$  գործակիցը տատանվում է 0.81-0.83-ի շրջանակներում: Սա փաստում է տվյալ խնդրի լուծման ուղղությամբ գրավիտացիոն մոդելների բարձր կարողության մասին: Անդրադառնալով տարբեր գործոնների դերակատառությանը, պետք է փաստել տնտեսական զարգացման խզման գործոնի վիճակագրորեն և տնտեսագիտորեն էական նշանակություն՝ երկրների ինստիտուցիոնալ խզման բացատրության գործում. բացահայտված արդյունքները համընկնում են գրաֆիկական վերլուծության արդյունքների հետ՝ փաստելով, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների միջև առկա տարբերությունների 10% կրճատումը ապահովում է ինստիտուցիոնալ խզման 0.13-0.16 կետով նվազում: Ստացված գնահատականները զգալիորեն գերազանցում են ՀՀ ինստիտուցիոնալ խզման մոդելներում գնահատված գործակիցներին, ինչը փաստում է Հայաստանում՝ աշխարհի մյուս երկրների (տվյալ

<sup>62</sup> Աշխարհագրական հեռավորության աղյունքները՝ <http://www.cepii.fr/anglaisgraph/bdd/distances.htm>

դեպքում՝ ընտրանքի 48 երկրների) համեմատությամբ միջինում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ավելի ցածր փոխկապվածության մասին:

### Աղյուսակ 3

#### Քայաստանի ինստիտուցիոնալ խզման գրավիտացիոն մոռելր

	WGI4_A	WGI4_C	WGI6_A	WGI6_C
1	2	3	4	5
GDPC ratio	0.914*** (31.57)	0.940*** (31.72)	1.114*** (34.05)	1.177*** (36.20)
dist weight	-0.125*** (-3.29)	-0.147** (-3.82)	-0.074* (-1.73)	-0.121*** (-2.91)
trade open	-0.115** (-2.03)	-0.067 (-1.17)	-0.204*** (-3.20)	-0.114* (-1.81)
d1998		-0.278		-0.411
d2000		0.072		-0.191
d2002		0.024		-0.197
d2003		-0.071		-0.217
d2004		-0.201		-0.318
d2005		-0.172		-0.200
d2006		-0.066		-0.078
d2007		0.083		0.164
d2008		0.225		0.334
d2009		0.212		0.382
d2010		0.042		0.254
d2011		0.100		0.296
_cons	1.497*** (5.30)	1.616*** (5.73)	1.392*** (4.35)	1.654*** (5.34)
R <sup>2</sup>	0.653	0.666	0.695	0.724
R <sup>2</sup> _a	0.651	0.657	0.694	0.717
N	619	619	619	619
F	315.89	80.20	468.65	105.55
P	0.0000	0.0000	0.0000	0.0000

**Ծանօթաթյուն:** Աղյուսակներ 3-նմ և 4-ում բերված են գործակիցների մեծությունները, նրանց ներքևում փակագծերում բերված են t-վիճակագրի մեծությունները: Աստղանշերով նշակած են նշանակալիության մակարդակը: \*-ը մեծությունը <0,1, \*\*-ը մեծությունը <0,05, \*\*\*-ը ը մեծությունը <0,01:

WG16 – որպես կախյալ փոփոխական օգտագործվում է 6 բաղկացուցիչոց կազմված ինստիտուցիոնալ ինդեքսը,

WG14 - որպես կախյալ փոփոխական օգտագործվում է 4 բաղկացուցիչոց կազմված ինստիտուցիոնալ ինդեքսը,

GDPC ratio – և և երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծագույն ցուցանիշի և փոքրագույն ցուցանիշի

հարաբերակցության լոգարիթմ,

d1998 – d2011 – կեղծ-փոփոխական առանձին տարիների համար:

Անդրադառնալով աշխարհագրական հեռավորության ցուցանիշին, պետք է նշել, որ ի տարրերություն Քայաստանի համար կառուցված մոռելների, սույն տարրերակում աշխարհագրական հեռացվածությունը տնտեսագիտութեն և վիճակագրորեն նշանակալի ազդեցություն է ունենում ինստիտուցիոնալ խզման վրա. մոտ գտնվող երկրները նկարագրվում են նմանատիպ ինստիտուցիոնալ բնութագրիչներով: Նշանակալի և էականորեն բարձր ազդեցության գործակիցներ են արձանագրում առևտուի բացության ցուցանիշները փաստելով, որ առևտուի բացության 1% աճը կարող է հանգեցնել 0.37-0.46 միավորով ինստիտուցիոնալ խզման նվազման:


**Ֆինանսավայրից ունեցած ինստիտուցիոնալ խզումների բացատրության  
գրավիտացիոն մոդելը**

	WGI4_A	WGI4_C	WGI6_A	WGI6_C
1	2	3	4	5
GDPc ratio	1.277*** (50.30)	1.291*** (51.47)	1.616*** (52.29)	1.636*** (53.53)
dist weight	0.100** (2.26)	0.103** (2.37)	0.153*** (2.82)	0.158*** (2.97)
trade open	-0.378*** (-5.19)	-0.369*** (-5.13)	-0.461*** (-5.18)	-0.445*** (-5.07)
d1998		-0.545		-0.411
d2000		-0.283		-0.191
d2002		-0.026		-0.197
d2003		-0.025		-0.217
d2004		0.021		-0.318
d2005		0.072		-0.200
d2006		0.019		-0.078
d2007		0.129		0.164
d2008		0.036		0.334
d2009		0.104		0.382
d2010		0.189		0.254
d2011		0.137		0.296
_cons	0.457 (1.30)	0.412 (1.19)	0.113 (0.26)	0.045 (0.10)
R <sup>2</sup>	0.809	0.819	0.821	0.831
R <sup>2</sup> _a	0.808	0.815	0.820	0.826
N	619	619	619	619
F	868.31	182.72	941.20	197.86
P	0.0000	0.0000	0.0000	0.0000

Գծապատկեր 7-ը ներկայացնում է 1996-2011թթ. Երկրների ինստիտուցիոնալ խզման միջին գնահատկանները 4 բաղադրիչներով ինդեքսների հիման վրա: Գծապատկերում արցիցների առանցքի վրա ներկայացված է փաստացի ինստիտուցիոնալ խզման ինդեքսի գնահատականները, իսկ օրդինատների առանցքի վրա տեղադրված է վերոնշյալ մոդելների շրջանակներում գնահատված համապատասխան արժեքները: Վերջինս, ըստ եւրյան, արտահայտում է յուրաքանչյուր երկրի ինստիտուցիոնալ խզման հաշվարկված (օբյեկտիվ) մակարդակը, այսինքն, միջին հաշվով ինչպիսին կարող են լինել երկրների ինստիտուցիոնալ ցուցանիշները, եթե նրանց հնատիտուցիոնալ զարգացումը համապատասխանի դրանց զարգացման համար առկա օբյեկտիվ պայմաններին (աշխարհագրական, առևտության գործոններին, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակին և այլն):

Ինստիտուցիոնալ խզման փաստացի և հաշվարկված արժեքների համեմատությունը թույլ է տալիս գնահատել տվյալ երկրի ինստիտուցիոնալ միջավայրի փաստացի հրավիճակի համապատասխանությունը զարգացման օբյեկտիվ պայմաններին և հնարավորություններին: Ինստիտուցիոնալ խզման փաստացի և հաշվարկված արժեքների միջև եղած տարրերությունը կարելի է մեկնաբանել որպես առկա ինստիտուցիոնալ զարգացման հնարավորությունների ոչ լրիվ օգտագործում: Այսպես, գծապատկերում ներկայացված ուղղի գծից ներքև ընկած երկրներուն փաստացի ինստիտուցիոնալ խզումն ավելին է, քան դրա օբյեկտիվ պատճառների հիման վրա հաշվարկված գնահատականն է, այսինքն ինստիտուցիոնալ զարգացման ներուժն ավելի քիչ չափով է օգտագործվում:

Գծապատկեր 7-ի երկրները կարելի է առանձնացնել մի քանի մեծ խճերով: Օրինակ, հարավ-արևելյան քառորդում ընդգրկված են ինստիտուտների զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրները (ինստիտուցիոնալ խզման փաստացի արժեքը միջինից բարձր է), որտեղ ինստիտուցիոնալ զարգացման ներուժն աճբռջությամբ չի օգտագործվում: Այս երկրներում, որոնց շարքում հարկ է առանձնացնել Ռուսաստանին, Բելառուսին, Ղազախստանին, Իրանին, Թուրքիային, հաշվարկված ինստիտուցիոնալ խզումն ավելի ցածր է, քան՝ փաստացին:



**Գծապատկեր 7. Փաստացի և հաշվարկված ինստիտուցիոնալ խզում, 4 բաղադրիչներից կազմված իններու, 1996-2011թթ. (միջին)**

Գծապատկերի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող երկրներում՝ օրինակ Տաղիկստան, Ուզբեկստան, Ղրղզստան, ինտիտուցիոնալ առաջընթացի հնարավորությունները բավականին ցածր են ու խզման և փաստացի, և հաշվարկային արժեքները համեմատաբար մեծ են: Ինչպես նաև այս հատվածում կարելի է առանձնացնել երկրներ, օրինակ՝ Հյայստան, Վրաստան, Մոլդովա, Բուլղարիա, Չինաստան, որոնք չնայած առկա տնտեսա-աշխարհագրական գործուների ոչ բարենպաստությանը, որոշակի դրական արդյունքներ են արձանագրել ինստիտուտների գործազման գործում:

**Առնեալուսության հիմքերորդ՝ «Դաշտաստանի տնտեսության հիմնահույսի պահպանը» գլուխը նվիրված է ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության բարելավման հիմնարար ուղղությանը, ինչպես նաև նորագործական տնտեսության կառուցմանը՝ որպես ՀՀ տնտեսության միջազգայինազման գերակա ուղղության:**

Վերջին տարիներին ինստիտուցիոնալ զարգացման գնահատման ոլորտում առկա առաջնաբար երկրների հնատիտուցիոնալ դիմանձնկայի քանակական վերլուծության համար հետազոտողներին տրամադրում է ոչ միայն հետաքրքիր նյութեր, այլև հնարավորություն է ընծեռում առանձնացնել ինստիտուցիոնալ բարեփոխմաների առաջնահեղողություններով:

Ակնհայտ է, որ Հայաստանի «անբնական զարգացման» պատճառներից մեկը տրանսֆերտներն ու հումքային եկանութենքն են: Որքանո՞վ է անխուսափելի հումք արտահանող երկրների ինստիտուցիոնալ խզումը: Ընդհանուր առնամբ, դա անխուսափելի չէ, սակայն ինչպես ուղյուղ է տայիս երկրների մեծ մասի փորձը, հումքային պաշարների արկայությունը դժվարացնում է ինստիտուցիոնալ առաջնորդացը:

Վերջին տասնամյակում աշխարհում ծևավորվել է կարծ մամանակահատվածում արագ ինստիտուցիոնայ զարգացման և հիմնական ինստիտուտների գործունեութեան

թյան բարելավման որոշակի փորձ: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների (WBWGI)՝ վերջին 15 տարիների ընթացքում մեծ թվով հետացիալիստական երկրներ ակտիվորեն բարելավում էին ազգային ինստիտուտների որակը: 1996-2011թթ. ընթացքում ինստիտուցիոնալ ինդեքսներն աճել էին նաև Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրներում, որտեղ այդ աճը պայմանավորված էր ինստիտուցիոնալ միջավայրի ակտիվ բարեփոխումներով: Այդուսակ 5-ում ներկայացված են այս երկրները, որոնց հաջողվել է եաւես բարելավել իննական ինդեքսների արժեքը:

#### Այլուսակ 5

##### Ինստիտուտների որակի բարելավումը, 1996-2011թթ.<sup>63</sup>

Հակակոռուպցիոն վերահսկողություն	Պետական կառա- վարման նարմինների արդյունավետություն	Կարգավորող ինստիտուտների որակ	Իրավական ինստիտուտների որակ
Լիբերիա	1.3	Մալթա	1.45
ՍՎԵ	1.17	Լատվիա	1.19
Քարար	1.11	Լիտվա	1.17
Լատվիա	1.03	Բուլղարիա	1.08
Բահամյան կղզիներ	1.00	Սուրինամ	0.86
Էստոնիա	0.97		
Տաջիկստան	0.83		
Մալթա	0.82		
		Իսլանդիա	1.20
		Կոնգոյի	1.13
		Ժող. Չանր.	
		Վրաստան	0.94
		Եթովպիա	0.92
		Սերբիա	0.91

